

17-18(375-376)

07.06.2014

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՈՒՆԵՅԱԾ ԳԻՏԵԼԻՔԸ ՈՐԴՈՂ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԼԻՆԻ ՍՏԱՅԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻՆ

Հանրակրթարաններում վաղուց մտաբերվել են դպրոցական վերջին զանգի ղողանջները, սակայն ոմանց համար հուզմունքի պահերը դեռ չեն ավարտվել: Նույնիսկ հակառակը կարելի է ասել՝ ներքին հուզական ապրումներին ավելացել են մտավոր լարումները: Եվ դա իր պարզ բացատրությունն ունի. չէ՞ որ սկսվել են միասնական քննությունները: Ասել է թե՛ դեպի մեծ կյանք տանող առաջին լուրջ քայլերն են արվում: Հիմա շատ կարևոր է բարձր գնահատականներ ստանալը, որը չես համեմատի մինչ այդ՝ ուսման ընթացքում ստացած գնահատականների հետ: Այդ թվանշաններից է մասամբ կախված ընդունելությունը մախընդարած բուհում, ինչու չէ՞ մաս վաղվա մասնագետ դառնալու հնարավորությունը, թեպետ հստակ ցանկություն ունենալու դեպքում միշտ էլ կարելի է հասնել նպատակին: Ոմանք ապահովության համար միանգամից դիմել են մի քանի բաժիններ, բայց ինչ էլ լինի, հավատացած ենք, «տաշած քարը գետնին չի մնալու», անհրաժեշտ գիտելիքներ ունեցողն անպայման համարելու է հանրապետության բազմաձևագր ուսանողության շարքերը:

Հատկանշական է, որ ոչ միայն շրջանավարտները, այլ նաև ինժեներողներն են այս օրերին քննություն հանձնում: Նրանց մի մասը քննությունների ավարտից հետո կտեղափոխվի ավագ դպրոց, մյուս մասը թերևս կնախնդրի ուսումը միջին մասնագիտական հաստատություններում կամ արհեստագործական ուսումնարաններում:

Մենք միշտ ասում ենք, որ մի շարք կարևոր արհեստներ, որոնք այնքան անհրաժեշտ են ժողովրդական տնտեսությանը, քիչ հետևողներ ունեն: Ցանկացած ոլորտում այսօր արհեստավոր մասնագետի կարիք կա, և արհեստագործական ուսումնարաններն էլ հենց կոչված են այդ պակասը լրացնելու: Կարծում ենք, հիշյալ խնդիրն սկսում է մեզ մոտ ցանկալի լուծում ստանալ, և տարիներ առաջ ունեցած այն մտավախությունը, թե ավանդական շատ արհեստներ կարող են մոռացության մատնվել, աստիճանաբար փարատվում է:

Ի՞նչ արդյունք կտան միասնական և ավարտական քննությունները: Թվում է, այնքան էլ եսկան չէ, թե ով կոնկրետ որ բուհը կամ կրթաճյուղը կընդունվի. մեզ համար առավել կարևորն այն է, որ նրանցից յուրաքանչյուրը վաղը պիտանի մասնագետ դառնա, և հանձին նրանց՝ ունենանք մեր պետության համար արժանի քաղաքացիներ: Ուրեմն, բոլորին հաջողություն մտաբերե՛ք՝ վստահանալով, որ ուսումնառության ընթացքում ունեցած գիտելիքներն ուղիղ համեմատական են լինելու ստացած գնահատականներին:

Ասել է թե՛ հաշված օրեր անց ուրվագծվելու է յուրաքանչյուրի մարմնավորվող երազանքը: Իսկ դա, կարծում ենք, ուրախ տրամադրության լավագույն առիթ է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ԽՐԱԽՈՒՄԱՆԷ, ՈՐ ՊԱՐՏԱԿՈՐԵՑՆՈՒՄ Է ՆԿԱՃԵԼ ՆՈՐ ԲԱՐՉՈՒՆԵՆԵՐ



Արդեն ավանդույթ է դառնում դպրոցականների առարկայական օլիմպիադաներում բարձր արդյունքների հասած աշակերտներին պետական բարձր մակարդակով խրախուսելը: Բարի ավանդույթի սկիզբը դրվեց անցած տարի: Եվ ահա այս ուսումնական տարվա ավարտի նախօրյակին 27 դպրոցականներ հյուրընկալվեցին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի նստավայրում և նրա կողմից խրախուսվեցին արժեքավոր նվերներով: Այդ նրանք էին, որ առարկայական օլիմպիադայի Հայաստանի Հանրապետության եզրափակիչ փուլում գրավել էին մրցանակային տեղեր կամ արժանացել գովասանագրի: Մեկ անգամ ևս հիշենք այդ անունները:

### ՅՐԳ ԿԱՐԳԻ ՈՒՄԱՐՆԵՐԻ

Արեն Ավագյան - հայ գրականություն (Ասկերանի միջն. դպրոց, 10-րդ դաս.), Դինա Գասպարյան - ռուսաց լեզու (Ստեփ. հ. 3 միջն. դպրոց, 10-րդ դաս.), Էլլարա Հայրապետյան - պատմություն (Խաչնաչի միջն. դպրոց, 12-րդ դաս.), Ժենյա Հարությունյան - պատմություն (Ճարտարի հ. 1 միջն. դպրոց, 11-րդ դաս.), Յուրա Մարգարյան - Հայ եկեղեցու պատմություն (Խաչնաչի միջն. դպրոց, 7-րդ դաս.), Լուսինե Մինասյան - աշխարհագրություն (Մարտակերտի շրջան, Սեյսուլա-նի միջն. դպրոց, 11-րդ դաս.), Սամվել Միրզախանյան - ֆիզիկա (ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղ, 12-րդ դաս.), Վիկտորյա Միրզախանյան - մաթեմատիկա (ֆիզմաթ, 8-րդ դաս.), Լուիզա Ներսիսյան - ռուսաց լեզու (հ. 11 ավագ դպրոց, 12-րդ դաս.):

### ԱՐԺԱՆԱԳՎԵԼ ԵՆ ԳՈՎԱՍԱՆԱԳՐԻ

Հրաչ Բաբայան - ֆիզիկա (ֆիզմաթ, 9-րդ դաս.), Էդգար Դուրխանյան - Հայ եկեղեցու պատմություն (Մարտունու շրջանի հանուշիանի միջն. դպրոց, 8-րդ դաս.), Սերգեյ Հայրապետյան - ֆիզիկա, մաթեմատիկա (ֆիզմաթ, 10-րդ դաս.), Դավիթ Հարությունյան - մաթեմատիկա (ֆիզմաթ, 10-րդ դաս.), Սամվել Սաֆարյան - քիմիա (Մարտունու շրջանի Թաղավարի միջն. դպրոց, 9-րդ դաս.), Մերի Սողոմոնյան - հայ գրականություն (Մարտունու շրջանի Բերդաշենի միջն. դպրոց, 11-րդ դաս.):

### ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՐԳԸՎ ԱՐԻՆ ԵՆ ԳՈՎԱՍԱՆԱԳՐԻ

Աննա Արզումանյան - անգլերեն (հ. 11 ավագ դպրոց, 10-րդ դաս.), Լարիսա Գևորգյան - անգլերեն (հ. 11 ավագ դպրոց, 12-րդ դաս.), Լուսինե Մարտիրոսյան - հայ գրականություն (հ. 11 ավագ դպրոց, 12-րդ դաս.):

Կարգի դիպլոմակիրների ուսուցիչները. հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմենուհի Խաչատրյան (հ. 11 ավագ դպրոց), ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջոյա Մարտիրոսյան (հ. 3 միջն. դպրոց), անգլերենի ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյան (հ. 11 ավագ դպրոց), ՆՁՊ ուսուցիչներ Կարոժան Աղաջանյան (հ. 10 հիմն. դպրոց), Ֆեդյա Ապրեսյան (Թալիշի միջն. դպրոց), Ջավեն Բադասյան (Թաղավար), Անդրեյ Բալայան (ՌՄՎ), Արսեն Հարությունյան (հ. 5 հիմն. դպրոց):

Արշակ Քոչարյան (Չարեքտարի միջն. դպրոց): Երկրի ղեկավարին իրենց երախտագիտությունը հայտնեցին դիպլոմակիրներ Լուսինե Մարտիրոսյանը և Սամվել Միրզախանյանը: Նրանք վստահեցրին, որ նման գեղեցիկ միջոցառումը խթան կդառնա հետագա հաջողությունների և ավելի մեծ հաղթանակների համար, և խստացան միշտ ծառայել մեր պետությանն ու հայրենիքին:

Աշակերտների և ուսուցիչների աշխատանքն արժևորելու և գնահատելու համար սրտի ջերմ խոսք ասաց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմենուհի Խաչատրյանը: «Ուրախ ենք, որ երկրի ղեկավարության, իշխանությունների կենտրոնում են դպրոցը, ուսուցիչները, աշակերտները: Այսուհետ հնարավոր ամեն ինչ կարվի, որպեսզի գալիք տարիներին ավելի շատ տաղանդավոր աշակերտներ մասնակցեն համարակցական և միջազգային օլիմպիադաների, ամեն ինչ կարվի ի փառս Արցախ աշխարհի, մեր ազգի և դպրության»:

Մանկավարժների, աշակերտների անունից երախտագիտության խոսքով հանդես եկավ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Արսյանը, ով նույնպես նշեց, որ արդեն ավանդույթ դարձած՝ աշակերտների և ուսուցիչների նման ձևով ընդունելությունը և խրախուսումը մղում է ավելի լավ գործունեության, ավելի լավ աշխատանքների: Նա ասաց, որ ծեղք բերածը սահման չէ, գիտելիքների աշխարհը անսպառ է, և դպրոցականներին կոչ արեց նվաճել նոր բնագծեր, ինչի համար ամբողջ կյանքում պետք է ձգտել գիտելիքի: Նա վստահ է, որ օլիմպիադաներում հաղթած աշակերտները հետագայում կդառնան լավագույն ուսանողներ:

Մանկավարժների, աշակերտների անունից երախտագիտության խոսքով հանդես եկավ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Արսյանը, ով նույնպես նշեց, որ արդեն ավանդույթ դարձած՝ աշակերտների և ուսուցիչների նման ձևով ընդունելությունը և խրախուսումը մղում է ավելի լավ գործունեության, ավելի լավ աշխատանքների: Նա ասաց, որ ծեղք բերածը սահման չէ, գիտելիքների աշխարհը անսպառ է, և դպրոցականներին կոչ արեց նվաճել նոր բնագծեր, ինչի համար ամբողջ կյանքում պետք է ձգտել գիտելիքի: Նա վստահ է, որ օլիմպիադաներում հաղթած աշակերտները հետագայում կդառնան լավագույն ուսանողներ:

## ԴԻԼԻՉԱՆԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԴՊՐՈՋԻ ԱՐՅԱՆՅԱՆ ԸՆՈՐՀԱՆԴԵՍ



2014թ. սեպտեմբերին Դիլիջանի միջազգային դպրոցն իր դռները կբացի շուրջ 50 երկրներից 16-18 տարեկան հարյուր տղաների և աղջիկների առաջ: Հունիսի 4-ին Ստեփանակերտի «Վալերս գարդեն» հյուրանոցի դահլիճում տեղի ունեցավ Արցախի բարձր դասարանների աշակերտների, ուսուցիչների հանդիպումը դպրոցի ներկայացուցիչների հետ: Ներկա էին ԼՂՀ կրթության և գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարները: Միջոցառումը կազմակերպվել է ԼՂՀ

Մե նախարարության երիտասարդների մասնագիտական կողմնորոշման ծրագրի շրջանակում, ինչի կապակցությամբ նախարար Նարինե Աղաբալայանն իր ուղերթի խոսքում հույս հայտնեց, որ վաղվա սերունդը լավ մասնագետ կդառնա՝ մեր պետության զարգացման անհրաժեշտ: Ի՞նչ է իրենից ներկայացնում Դիլիջանի միջազգային դպրոցը, ի՞նչ ծրագրեր ու առաքելություն ունի, ինչպե՞ս դառնալ այդ դպրոցի ուսանող. այս մասին էին հյուրերի ելույթները: Դպրոցի հիմնադիրներն են մոսկվա-

բնակ գործարար Ռուբեն Վարդանյանը և նրա տիկին Վերոնիկա Ջենոբենը: Վերջինս ներկա էր շնորհանդեսին և ներկայացրեց դպրոցի պատվիրակությանն ու նպատակը: Թե ինչու է հիմնադրամը հիմնական ուղղություն ընտրել կրթությունը, նա բացատրեց կրթության դերի մեծ նշանակությունը: Երկրի ապագան կախված է այն մարդկանցից, ովքեր կապրեն այդ երկրում, և այդ իմաստով Արցախի ու Հայաստանի ապագան կախված է այսօրվա պատանիներից ու աղջիկներից: 2

ՎԵՈՒՄԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՐՃԱՆՅԱՆ ԸՆՈՐՀԱՆՊԵՍ

1 Երկրի հաջողությունը կախված է լինելու այն բանից, թե ինչ գիտելիքներ կունենան նրանք:

Դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամները կրթության ոլորտի ու բիզնեսի ակադեմիկոսներ կարգադրվեն են ՌԴ-ից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Եվրոպայից և այլ երկրներից:

Դիլիջանի միջազգային դպրոցի տնօրենի պաշտոնում նշանակվել է Ջոն Փարգոնը, ով եղել է Լոնդոնի ավելի քան 570 տարվա պատմություն ունեցող արքայական քոլեջի փոխտնօրենը, Ջնկաստանի Հանրապետության քաղաքի Ադա Խան ակադեմիայի հիմնադիր-տնօրենը և մեծ փորձառություն ունի Մեծ Բրիտանիայի կայացած ու Ասիայի սկսական դպրոցներում: Նա ներկայացրեց դպրոցի կրթական ծրագրերը, հեռանկարները:

Դիլիջանի միջազգային դպրոցը մաս է կազմում Միացյալ համաշխարհային քոլեջների /JWC-ՄՀՔ/: Միացյալ քոլեջների ցանցն աշխարհում ավելի քան 50 տարվա պատմություն ունի: Առաջինը ստեղծվել է Մեծ Բրիտանիայում՝ Ատլանտիկ քոլեջը, իսկ հետագայում շրջանակն ընդլայնվել է: Վերջին՝ 14-րդը, Դիլիջանի դպրոցն է: Ցանցի բոլոր դպրոցները դասավանդվում են նույն՝ ավագ դպրոցի վերջին երկու տարվա ծրագրով: Ուսման տևողությունը երկու տարի է: Ուսանողներին տրվում է միջազգային բակալավորատի դիպլոմ, որը աշխարհում ամենաբարձրակարգ դիպլոմներից մեկն է համարվում լավագույն համալսարաններ ընդունվելու համար: ՄՀՔ նպատակն է՝ միացնել տարբեր երկրների, տարբեր մշակույթների մարդկանց, որպեսզի նրանք գործող ուժ դառնան խաղաղության, զարգացած ապագայի համար:

Շնորհանդեսի ժամանակ եկրամին ցուցադրվեցին Դիլիջանի դպրոցի շենքերը, որոնք կանոնադրվել են միացած են իրար: «Դա խորհրդանշում է, որ այդպես մաս մարդկանց պետք է միացնեն»- ասաց տնօրենը: Դիլիջանի միջազգային

դպրոցը նախատեսված է 50 երկրներից 650 սովորողների համար: Ինչպես արդեն ասվեց, ընթացիկ տարվա սեպտեմբերին այստեղ կուսանան 100 սովորողներ, որոնց ընդունելությունը կատարվել է անցյալ տարվա աշնանը: Դպրոցը միջազգային է թե՛ ուսանողական, թե՛ ուսուցչական կազմով: Աշակերտների մոտավոր կազմն այսպիսին է՝ 10 տղու՝ Հայաստանից և Արցախից, 35-ը՝ Արևելյան Եվրոպայից, 35-ը՝ Մերձավոր Արևելքից, 20 տղու՝ մնացյալ աշխարհից: 18 ուսուցիչները և 12 վարչական աշխատողները սերում են 11 երկրներից: Դիլիջանի դպրոցի մասին Ջոն Փարգոնը այսպես արտահայտվեց. «Աշխարհը բերում ենք Հայաստան և Հայաստանը ճանաչելի ենք դարձնում աշխարհին»:

Դիլիջանը ներառելով ՄՀՔ ցանցում, հիմնադիրները նպատակ ունեն Հայաստանը ոչ միայն ընդգրկել միջազգային կրթության բնագավառում, այլև այս դպրոցով կրթության նոր մոդել ներկայացնել տարածաշրջանում, որը կրթականից բացի, ունի նաև մշակութային, համայնային, սոցիալական բարոյադրիչներ: Ամեն շրջանավարտ պարտավոր է ծառայել այն համայնքին, որտեղից ինքը դուրս է եկել: «Փորձում ենք ակտիվ, լիդերության հատկանիշներով օժտված երիտասարդներին բերել մի տանիքի տակ, որտեղ նրանք իրար թերթությունները հասկանալով, իրար հետ շփվելով, բանակցելով՝ կարող են իրար ավելի հեշտ հասկանալ և ապագայում ավելի ապահով վայր, աշխարհի ստեղծել: Այսպիսի պայմաններում կրթություն տալով պատահիներին և աղջիկներին, նրանց մեջ կկարողանանք սերմանել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ազատ միտքը, մյուսի տեսակետը լսելու, անհամաձայնության դեպքում այդ տեսակետը հարգելու ունակությունը, լինել հանդուրժող:

Այստեղի կրթությունը կսովորեցնի խնդիրների, դժվարությունների պարագայում ոչ թե հետ կանգնել և մարտական ոգին կորցնել, այլ հմուտ ձևով կարողանալ դիմացինին պատասխանել՝ առանց նրան վիրավորելու»-շարունակեց տնօրենը այսպես ձևակերպելով իրենց դպրոցի կարգախոսը. «Մեր դպրո-



ցի ամենամեծ փառքը գալիս է ոչ թե նրանից, որ մենք չենք ընկնում, այլ որ ամեն ընկնելուց կարողանում ենք վեր բարձրանալ և շարունակել քայլել»:

Դպրոցի մյուս ներկայացուցիչները ներկայացրին նրա տարբեր կողմերը, որոնցով զբաղվում են իրենք: ՄՀՔ-ն ակադեմիկ և ոչ ակադեմիկ ու ինքնագրագրացման բաղադրիչի համակցություն է, որը թույլ է տալիս ուսանողին ընկնել այնպիսի միջավայրի մեջ, որտեղ ինքն իր նմանների հետ շփվելով վերափոխվում է:

Ծրագրի երկրորդ ուղղությունն ուսուցիչների պատրաստումն է Հայաստանի դպրոցների համար, որը կոչվում է «Teach for Armenian»: 2014թ. հոկտեմբերից մինչև 2015թ. ապրիլը կանցկացվի առաջնային ընտրություն 20 մասնակցի համար Հայաստանից, Սփյուռքից ու Արցախից: Ի դեպ, պարտադիր չէ, որ նրանք լինեն ուսուցիչներ: Դրանից հետո ընտրված մասնակիցները կանցնեն ինտենսիվ վերապատրաստում, որպեսզի երիտասարդ մասնագետից վերափոխվեն մաս-

կավարժի: Նրանք կանցնեն մասնավարժության հետ կապված տեսական հարցեր և գործնական կողմը կապահովեն ամառային դպրոցների միջոցով՝ շփվելով երեխաների հետ: Ուսուցիչների ընտրության հետ միասին կհամագործակցեն գործընկեր դպրոցների հետ՝ իմանալու նրանց կարիքներն ըստ մասնագիտությունների:

2015-ից ծրագրի պատասխանատուների կողմից կուղղորդվեն 5 գործընկեր դպրոցներ՝ ամեն դպրոցում՝ երկու մասնակից: Արդյունքը պետք է լինի դասավանդվող դասարաններում ուսման որակի բարձրացումը, յուրաքանչյուր աշակերտի ներուժի բացահայտումը, որպեսզի նա հասկանա, որ չկա անհնար մի բան, որին ինքը չհասնի: Միևնույն ժամանակ, ծրագրում

ընդգրկված ուսուցիչները պետք է աշխատեն դպրոցի հետ և փոխանցեն իրենց գիտելիքները գործընկերներին: «Teach for Armenian»-ի կրթական պաշարները իրենից ներկայացնում են ձեռնարկներ, գրքեր, հատուկ մեթոդաբանությամբ մշակված խաղեր, վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական դպրոց, տարբեր երկրների փորձի փոխանակում (ծրագիրն աշխատում է 32 երկրներում): Եվ մյուս ամենակարևոր հանգամանքը՝ ուսուցիչը կկարողանա երեխաներին պատրաստել բուհական ընդունելության քննությունների համար, կուղղորդի նրանց գիտական կարիերայի պատրաստման հարցում:

Կարևոր է, ինչպես նրանք են ասում՝ ուսուցիչները լինեն փոփոխության լիդերներ և պիոներներ համայնքային կյանքում, աշխատանք տանեն ոչ միայն դասարանում աշակերտների, այլ նաև հասարակության հետ, համայնքի անդամների հետ դպրոցը դարձնեն գաղափարների վերարտադրման կենտրոն: Մյուս ուղղությունն ամառային

ճամբարների կազմակերպումն է: Անցյալ տարի Դիլիջանը հյուրընկալեց 14 ազգությամբ 30 աշակերտների, որոնք եղան Հայաստանի տարբեր վայրերում, ուսումնասիրեցին հայոց պատմությունը: Այս տարի նախատեսված է երկշաբաթյա ծրագրի ընթացքում եռօրյա վրանային ճամբար կազմակերպել Քարահունջում: Հարցազրույցի միջոցով երկու աշակերտ կընտրվի Արցախից:

Նշենք, որ Դիլիջանի միջազգային դպրոց ընդունվելու համար անցած աշնանը կազմակերպված մրցույթին արցախցի դպրոցականները մասնակցել են, բայց չեն ընդունվել: Հաջորդ՝ 2015-2016 ուստարվա համար նախատեսված է երկու տեղ, ընդ որում՝ ընդունված աշակերտները կարող են սովորել ոչ միայն Դիլիջանի, այլև ՄՀՔ ցանցի ցանկացած դպրոցում: Ուսման վճարը, որը բավականին բարձր է, հիմնականում հոգում են բարերարները և տարբեր հիմնադրամներ:

Մրցույթը խիստ է, բայց ոչ քննությունների ձևով, այլ՝ գրույցների, քննարկումների, փոքրիկ շարադրությունների: Դպրոց ընդունվելը կախված չէ ծնողի նյութական վիճակից, սոցիալական կարգավիճակից:


ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը հավանություն տալով ծրագրին՝ վստահություն սերմանեց աշակերտների մեջ, ասելով, որ իրենց գիտելիքներով, կարողություններով և ուսակություններով նրանք ի գորու են ընդունվել մասն բարձրակարգ դպրոց: Նախարարը միաժամանակ ասաց, որ ներկայացվածը մեր հանրապետության համար համագործակցության մեծ ծրագիր է, որը միևնույն ժամանակում պետք է իրականացնել: Այս շրջանակում նա համագործակցության պատրաստակամություն հայտնեց՝ առաջարկելով բոլոր խնդիրներն իրականացնել կամ համաձայնագրի տեսքով, կամ էլ անմիջապես դպրոցների հետ՝ հորիզոնական կապերով և ըստ նախատեսված փուլերի:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԸ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԵԼԻՔ

Մայիսի 28-ին Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճում տեղի ունեցավ «Կենցաղ-2014» մրցույթի մրցանակաբաշխությունը: Ներկայություն ունեցան և օրվա առթիվ շնորհակալորեց ԼՂՀ ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը: Մայիսի 28-ը տոնակա օր է՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրը: Կրկնակի տոնակա, որովհետև այստեղ են մեր երեխաները՝ իրենց փոքրիկ հաղթանակներով: Փոխնախարարի խոսքով երբ վերլուծում ենք պաշտոնապես արդեն չորրորդ տարին անցկացվող «Կենցաղ»-ի արդյունքները, նկատում ենք, որ բավական հաջողություններ ունենք: Նախ՝ մասնակիցների աշխարհագրությունն է ընդլայնվել, մեծ թվով դպրոցներ միացան: Անցյալ տարի 1700 հոգի է մասնակցել, այս տարի՝ 2000: Շեշտելու փաստ է նաև այն, որ այս տարի ավելացել են միջին միավորները: Նաև «երկվորյակ» աշխատանքներն են պակասել, ինչը նշանակում է, որ պահպանվել է մրցույթի անցկացման կարգը: Այս առաջընթացն ուսուցիչների տարած աշխատանքի շնորհիվ է, ինչի համար փոխնախարարը շնորհակալություն հայտնեց նրանց:

լուծում են ճիշտ, մեկ խնդիր կամ չեն լուծում, կամ սխալ են լուծում, համարվում են հաղթող: Բայց նրանք պաշտոնապես հաղթող են հայտարարվում այն բանից հետո, երբ «Կենցաղ»-ի կազմակերպիչներն անձամբ նրանց



հետ հանդիպում են, լրացուցիչ հարցազրույցով, թեստով համոզվում, որ իրոք, ինքնուրույն են լուծել: Ցավոք, լինում են և այսպիսի դեպքեր, երբ «օգնություններ» են լինում երեխաներին՝ լինի դա իրենց՝ երեխաների կողմից, իրար հուշելով, թե ուսուցիչների: Նման դեպքերում պատժվում են բոլորը՝ ընդհուպ մինչև տվյալ դպրոցը: Ոչ մի երեխայի աշխատանք չի համեմատվում մեկ ուրիշի հետ, ոչ երեխաների, ոչ դպրոցների, դրա իմաստը չկա: Երեխան

ինքը միայն տեսնում է իր թույլ և ուժեղ կողմերը: Շեշտով է որոշվում երեխայի մրցանակակիր լինելը: Սա մրցույթի կանոններն են, որոնք հիմնված են «Այբ»-ի արժեքների վրա՝ արդարություն, ազնվություն, գիտելիք, կրթություն: Հաղթողների քանակով «Կենցաղ»-ն այս տարի անցել է նախորդ ամիսների սահմանները. ամենաշատը եղել է 5 հաղթող, այս տարի 8 էր: Իրականում Հայաստանում և Արցախում 18 երեխա է անցել հաղթողի շենք: «Այբ»-ի կազմակերպիչները բոլորի հետ հանդիպել են, գրուցել, 10-ը որակազրկվել են: Ցավոք, Արցախից հաղթող դեռ չունենք:

Արցախից 14 մասնակից հաղթահարել է լավագույնի շենքը: 3-րդ կարգի մրցանակը հատուկ մրցանակն է, որ շնորհվում է բոլոր այն դպրոցներին, որտեղ լավագույն կամ հաղթող երեխա չկա. տոկոսային հարաբերությամբ ամենաբարձր միավորներ հավաքածներին տրվում է խրախուսական հատուկ մրցանակ: Այսպիսով, չկա որևէ մասնակից դպրոց, որ գոնե մեկ մրցանակակիր երեխա չունենա:

Գնային տեսակետից մրցանակներն արժեքավոր չեն, արժեքավոր են ուրիշ իմաստով. դրանք հուշ են, ապացույց լավ արդյունք արձանագրած լինելու ու նաև՝ շատ օգտագործելի: Դա ամբողջ աշխարհում է այդպես: Առաջին՝ սա երեխայի արդյունքը խրախուսելու լավ ձև է, զմայախառն: Երկրորդ՝ զայթակրությունից խուսափելու համար. արժեքավոր

նվերի համար կարող են թույլ տրվել խախտումներ: Երրորդ՝ որ հնարավորին չափով շատ մրցանակներ տրվել երեխաներին:

Բոլոր դպրոցները և երեխաները ստացան մասնակցության հավաստագիր: Լավագույն արդյունք ցուցաբերած դպրոցականները պարգևատրվեցին դիպլոմով, կենցաղային փափուկ խաղալիքով, բարձր դասարանցիները՝ նաև ուսապայուսակով:

Արդեն որբերող տարին է՝ բոլոր մրցանակակիր աշակերտներին և մասնակից դպրոցներին նվիրում են մեկական օրինակ «Կենցաղ»-ի խնդրագիրը՝ լուծումներով (լուծման մեկ տարբերակով, բայց կարող են ունենալ մի քանի լուծում): Փորձը ցույց է տալիս, որ այն աշակերտները, ովքեր տարվա ընթացքում լուծում են «Կենցաղ»-ի խնդիրները (և ինչքան շատ են լուծում, այնքան ամեն տարի շատ ավելի լավ արդյունքների են հասնում), ավելի հեշտ են հաղթահարում խնդիրները, որովհետև նրանց մտածողությունը հղկվում է, սկսում են ավելի լայն մտածել ու ավելի արագ լուծում գտնել: Խնդրագրերը վաճառքում կան:

«Այբ»-ի ներկայացուցիչը դպրոցականներին հորդորեց նաև ամառային արձակուրդների ընթացքում խաղերին զուգահեռ փորձել տարիքային խմբին համապատասխան ամեն օր մի խնդիր լուծել: «Սովորեք ժամանակի հետ աշխատել, դա շատ օգտակար է, դուք կշահեք ժամանակ», - ասաց նա:

Սեփ.լրատվություն

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ՆԱԴԹԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱՎԱԿԱՆ

20 տարի առաջ մեր «սուրը փառքով դրեցինք պատյան»։ 20-րդ դարի վերջին հայ սերունդը կարողացավ անարգ թշնամու դեմ պատմական հաղթանակի հասնել...

թաց ապահովի ու մեր ազատ-անկախ երկիրն էլ ավելի բարգավաճ դարձնի։

ԼՂՀ ղեկավարությունը հնարավոր բոլոր միջոցներն օգտագործում է՝ աճող սերնդի կրթությունն ու դաստիարակությունը հավուր պատշաճի ապահովելու համար։

20 տարի է՝ Արցախի ժողովուրդը ապրելով «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» հեղինդուկ ժամանակաշրջանում՝ վերականգնում է իր հոշոտված երկիրը, քարուքանդ դարձած բնակավայրերը։

Եվ ինչպես պատերազմի նախօրյակին, այնպես էլ հիմա մեր թշնամին ուժեղ է քանակով, բնական պաշարներով՝ զազով ու նավթով, որոնք միլիարդավոր դոլարներ են բերում նրանց երկրի բյուջեին։

21-րդ դարի սերունդը թշնամու քանակին ու հարստությանը պիտի հակադրի իր խելքը, գիտության գաղտնիքներին տիրապետելով, նրա հնարավորությունները ճիշտ օգտագործելով՝ պետք է տնտեսական աննախադեպ առաջըն-

կրթության բաժնի վարիչ Զորիկ Դուլյանը, Մարտունու քաղաքապետ Ս. Խաչատրյանը, հովանավորներ՝ «Տնտես-2000» ԱԿ ղեկավար Զ. Գասպարյանը, «Խոնաշեն» ՍՊԸ տնօրեն Է. Ղազարյանը, «Սանասար» ՍՊԸ տնօրեն Ա. Ավանեսյանը, «Բյուրեղ» ՍՊԸ տնօրեն Ա. Գրիգորյանը, «Շինքար» ՍՊԸ տնօրեն Ն. Բալայանը, ովքեր պատվոգրեր և նվերներ հանձնեցին օրվա հերոսներին, նրանց ուսուցիչներին ու մարզիչներին։

Շրջվարչակազմի ղեկավարն ասաց, որ դպրոցականների ձեռքբերումները տարիների տևական աշխատանքի արդյունք են և իրականացվել են թե՛ աշակերտների և թե՛ ուսուցիչների քրտնաջան աշխատանքի շնորհիվ։

Ն. Սողոմոնյանը վստահություն հայտնեց, որ ունենալով խոր գիտելիքներ, ներկայիս սերունդը պատվով կկատարի իր առաքելությունը, հանձնիս նրա՝ մեր երկիրը կունենա քաղաքականապես պատրաստ, գիտելիքներով հարուստ, ֆիզիկապես առողջ երիտասարդություն, ինչն էլ բոլոր հաղթանակների գրավականն է։

Պատերազմի դաշտում բազում հաղթանակներ տոնած զինվորականը մաղթեց, որ ուսման բնագավառում հաղթանակներ ավելի շատ լինեն, խաղաղ պայմաններում արժանագրվող հաղթանակները համարեց պատերազմի դաշտում ունեցած հաղթանակների շարունակություն ու յուրօրինակ հերոսություն։

Հայ ժողովուրդը աշխարհին հայտնի է տարբեր ոլորտներում ունեցած իր հանճարեղ գա-

վակներով, ովքեր հայի պատիվն ու անունը միշտ էլ բարձր են պահել, ինչի շնորհիվ հայը աշխարհին հայտնի է որպես քաղաքակիրթ և բարձր ինտելեկտ ունեցող ժողովուրդ։ Այդ բոլոր նվաճումների հիմքը դրվում է դպրոցում։ Դպրոցական տարիներին է հիմնականում ձևավորվում անհատը, այստեղ է դրվում գալիք տարիների հաղթանակների հիմքը, և այս առումով մեծ է ուսուցչի, մանկավարժական կոլեկտիվի դերը։ Դպրոցի պատերի ներսում է ձևավորվում մեր երկրի վաղվա քաղաքացին։

Նշենք, որ միջոցառմանը առանձին շուք էին հաղորդում երգահան-կատարող Ռաշիդ Բաբայանի, երգիչ Արարատ Առստամյանի և Գյումրի քաղաքում կայացած «Վերածնունդ» միջազգային երաժշտական մրցույթ-փառատոնում առաջին տեղ գրաված Միքայել Մայիլյանի երգերը։

Միջոցառման ավարտից հետո դպրոցականները, ուսուցիչները Հաղթանակի հրապարակում, Ավոյի հուշարձանի մոտ նկարվեցին շրջվարչակազմի ղեկավարի և բարերարների հետ։

Ռուսիկ ԴՈՒՎԱՍՅԱՆ

ԵՐԲ ՓՈՐՁԻՆ ԳՈՒՄԱՐՎՈՒՄ Ե ՆՎԻՐՈՒՄՆ ՈՒ ՈՒՂԵՂԵՆԸ

«Գիտակից ոչ մեկ հայ կրնայ ուրանալ Հայ Դպրոցի անզուգական դերն ու կարեւորությունը մեր ազգային կեանքին մեջ։ Հայ Դպրոցը կոչուած է Մարդակերտութեան ու Հայակերտութեան վսեմ գործին։ Անոր նպատակն է հայ տղաքն ու աղջիկները կեանքի պատրաստել, անոնց նկարագիրը կերտել, անոնց բանական եւ հոգեկան աշխարհը ձեւակերպել»։

Խորհրդանշանական

Օրերս Աշոտ Դուլյանի անվան հ. 2 դպրոցի չորրորդ «ա» դասարանի աշակերտները հրաժեշտի դաս-միջոցառում կազմակերպեցին՝ հրաժեշտ սիրելի դասավարին։ Միջոցառումը առանձնահատուկ խորհուրդ ուներ. ասես ուսուցչուհու չորս տարիների տքնաջան աշխատանքի, կաթիլ-կաթիլ գիտելիքները ծով դարձնելու հանրագումարն էր,



մի յուրօրինակ վերջին դաս, որը ներառում էր դասապրոցեսի, դաստիարակչական գործընթացում կիրառվող բոլոր այն մոտեցումները, որին գերազանցորեն պիտի տիրապետի ամեն մի ուսուցիչ։ Գերմանացի մեծ փիլիսոփա, գրող Ռ. Շտայները նշում է, որ մանկավարժի կոչումը ոչ միայն զուտ գիտելիքներ հաղորդելն է, այլև «սո-

վորել սովորեցնելը», ուն մեջ մանկավարժությունն արթնացրել է աշակերտի էությունը հասկանալու կարողությունը։

Դասավար Անժելա Մելքունյանը Շտայների նշած մանկավարժներից է, ով իր սաների շուրթերին պահ է տվել աստվածաբանքար մայրենին, տեղ դարձրել նրա անսպառ գանձերին և չորս տարիների ընթացքում կարողացել է աշակերտներին ուղեկցել բույսերի, կենդանիների, երկնքի ու աստղերի մասին կախարդական աշխարհը ու այդ ամենը հասցրել նրանց հոգուն հեքիաթի ձևով,

Զորրորդիցներն այդ պակասը չունենին, ինչի վկայությունը երգն ու պարն էր, ասումըքն ու փոքրիկ բեմականացումը, որոնք կատարեցին նրանք՝ հիացմունք պատճառելով թե՛ իրենց ծնողներին, թե՛ տնօրինությանը՝ փաստելով նաև, որ դասավարի ջանքերն ու սպասումներն արդարացված են։ Դպրոցի տնօրեն Լ. Մարտիրոսյանը բարձր գնահատեց ուսուցչուհու տարիների վաստակը, անսպառ նվիրումը՝ շեշտելով, որ մանկավարժական բեղուն աշխատանքին երբ ծուլվում է ոգեղենը, արդյունքն այսպիսի միջոցառումներն են լինում։ Կզկորվեն ամառային արձակուրդի օրերը, և սեպտեմբերին դպրոցն իր հյուրընկալ դռները կբացի և՛ մեր՝ արդեն հինգերորդիցի աշակերտներին առաջ, և՛ նոր՝ առաջին դասարանցիների, և տիկին Մելքունյանը նույն նվիրումով ու ջերմությամբ կառաջնորդի նրանց դասարան՝ այբ-բենը նորից նրանց շուրթերին պահ տալու ակնկալի-

քով։ Անսահման աշխատասիրություն Ձեզ, եռանդ «ապագայի դպրոց»-ի, ասել է թե՛ պետականության ու մարդասիրության ոգով դաստիարակված սաներ ձևավորելու Ձեր վեհ առաքելության համար։

Նոնա ԴՎԱԹՅԱՆ

ԵՐԶԱՆԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱՂԱՂ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Մայիսի 27-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի նախադպրոցական «դ» խմբի դաստիարակ Իննա Նասիբյանի համաքաղաքային ընդօրինակման և հիտուության նախարարության, քաղաքապետարանի համապատասխան մասնագետներ, ինչպես նաև քաղաքի տարբեր դպրոցների նախադպրոցական խմբերի դաստիարակներ։



Դպրոցի բակը զարդարված էր տունակներով։ Վաղ առավոտից այն շնչում էր մանուկների երգ ու խիհրով։ Տարեվերջյան ավարտական միջոցառումը երեխաները սկսեցին գեղեցիկ վալսով։ Հետո հաջորդեցին գողտրիկ արտասանությունները, երգն ու պարը։ Ոգևորիչ էին վերջում մրցույթի ձևով անցկացված մարզական հետաքրքիր ու զվարճալի խաղերը։ Երեխաները հանդես եկան անկաշկանդ ու ինքնավստահ։

Միջոցառման վերջում ներկաներին տոնի առթիվ շնորհավորեցին դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության նախադպրոցական բաժնի պետ Ժաննա Այվազյանը, քաղաքապետա-

րանի կրթության և սպորտի բաժնի մեթոդիստ Թերեզա Կարախանյանը, ծնողներ և մաղթեցին նորանոր հաջողություններ։

Ելույթ ունեցողները նշեցին, որ հա-

ջողված, բազմաբնույթ ու բազմաբովանդակ միջոցառում էր։ Դաստիարակչուհին մեծ աշխատանք է արել, ստեղծել է համերաշխ կոլեկտիվ, զարգացրել երեխաների ստեղծագործական ունակություններն ու բանավոր խոսքը։ Նրանք կարողանում են իրենց մտքերն արտահայտել մայրենի լեզվով։ Երեխաները լրիվ պատրաստ են առաջին դասարանում սովորելու։ Նրանք մեր կյանքի պայծառ գույներն են։ Նրանց աչքերի փայլը, ժպիտը հավատ է ներշնչում ապագայի հանդեպ։

Թող աշխարհում ընդմիշտ թևածեն խաղաղության աղավաղները, և կյանք մտնող յուրաքանչյուր երեխա հասնի իր նպատակին։

Վ. ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ  
Սյրեհ. հ. 7 հիմն. դպրոցի  
Նախադպրոցական խմբերի  
բաժնի վարիչ



ՈՍՏԱՆ

ՎԱՂՈՒԿԱՍ՝ ԱՆՑՅԱԿԻՆ ԸՆԵՎԱԾ ԱՊԱԳԱ

ՈՐՊԵՍ ՍԿԻՔԸ

Թե Արցախի պատմական Վաղուհաս գյուղ երբ է լուսավորությունը մուտք գործել, կարող ենք ասել ենթադրությունների հիման վրա: Գյուղում կան մի քանի եկեղեցիներ, շատ են խաչքարերը, սուրբ մատուցները: Դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Վալերի Մանգասարյանի պատմածով, որը ինքն էլ լսել է գյուղի տարեցներից, ամենանշանավոր եկեղեցին Մարիամ քաղաք Աստվածածինն է, որը կարծում էին, թե կառուցվել է Գանձասարի նշանավոր եկեղեցուց հետո, բայց վերջերս բացված մի արձանագրությունից պարզվել է, որ ավելի վաղ է կառուցվել: «Քաղաք» անունը հենց այնպես չի կցվել: Այն բնակավայրերը, որոնք 700-800 տնտեսություն ունեին, այդպես էին կոչվում: Եկեղեցին եպիսկոպոսանիստ էր: Սպասարկում էր տարածքի գյուղերին: Այդ գյուղերի նմանակներին մինչև հողին հանձնելը բերում էին այս եկեղեցի: Ասում են, որ այն նաև մատենադարան էր, որտեղ պահվում էին մեծ թվով ձեռագրեր: 1930-ական թվականներին գյուղի կոմսոմոլները պայթեցրին եկեղեցին, գյուղի կենտրոնում, ժողովրդի աչքի առաջ վառեցին երկու դեզի չափ գրքերը: Միայն մի երիտասարդի հաջողվեց վերցնել մեկ գիրք, բայց դրա ճակատագիրն էլ անհայտ է: Ուսուցչի ենթադրությամբ՝ այդ գրքերը հավանաբար տեղեկություններ էին պարունակում գյուղի մասին, որոնք, ցավոք, չեն պահպանվել: Հնարավոր չէ, որ մատենադարան ունեցող եկեղեցին գրագիտության, գրաձանաչության օջախ չլիներ:



Մեկ ուրիշ հիմք էլ կա այդպես մտածելու: Պատմաբան Հայկ Խաչատրյանը «Պատմահայրը» վերնագրով ստեղծագործություն ունի, որը հորենացու մասին է: Ըստ ավանդապատմի, հորենացին, նեղացած իր հայրենի գյուղի ժողովրդից, ապաստան էր գտել Արցախի Հաթերք գյուղում: Հաթերքցիները միշտ տարածայնություններ ունեին վաղուհասցիների հետ՝ նրանց ջրաղբի պատճառով: Թե հորենացին ինչպես է լուծել ջրաղբի հարցը, կարծում ենք, տվյալ պարագայում էական չէ: Պարզապես անհնար է, որ ապրելով տվյալ տարածքում՝ նա դպրոց բացած չլիներ Հաթերքում, Վաղուհասում:

Թե երբ է Վաղուհասում դպրոց բացվել, ստույգ չենք կարող ասել, բայց հաստատ է մի բան՝ որ նա մի քանի անգամ է ծնունդ ապրել, ընդ որում, առնվազն երեք անգամ՝ ազատագրումից հետո:

Ինչպես հայտնի է, Վաղուհասը թուրքերը հիմնահատակ ավերել են Արցախյան պատերազմի ժամանակ: Եթե ասում ենք՝ Մարտակերտը Արցախի ամենատուժած շրջանն է, ապա Վաղուհասն էլ նրա ամենատուժած գյուղն է: Ոչ մի տուն կանգուն չէր մնացել: Թշնամին այդպես է արել, որպեսզի երբ այդ տարածքն այլևս իրենց վերահսկողությունից դուրս չլինի, բնակիչներն իրենց տները վերադառնալու հույս չպահեն: Իսկ եթե դպրոցն էլ ավերեն՝ հայի սրբատունը, հաստատ ետդարձի ճանապարհը կփակեն: Այդպես էին կարծում և համոզված էին, մասնավորապես, դպրոցն էլ էին վառել, իսկ նրա գանգը՝ իրենց աչքի փուշը, պոկել ու հեռու էին շարտել, որ այլևս չհնչի: Այդպես էր մտածում ոսոխը: Այդպես էր կարծում, բայց սխալվեց իր հաշիվներում, որովհետև, ի տարբերություն նրա, հայի համար հայրենիքը սոսկ տարածք չէ, ոչ էլ պատերն են, որ եթե չլինեն, ուրեմն՝ չկա, գոյություն չունի հայրենիք:

Մեզ լուրից հիմք էլ կա այդպես մտածելու: Պատմաբան Հայկ Խաչատրյանը «Պատմահայրը» վերնագրով ստեղծագործություն ունի, որը հորենացու մասին է: Ըստ ավանդապատմի, հորենացին, նեղացած իր հայրենի գյուղի ժողովրդից, ապաստան էր գտել Արցախի Հաթերք գյուղում: Հաթերքցիները միշտ տարածայնություններ ունեին վաղուհասցիների հետ՝ նրանց ջրաղբի պատճառով: Թե հորենացին ինչպես է լուծել ջրաղբի հարցը, կարծում ենք, տվյալ պարագայում էական չէ: Պարզապես անհնար է, որ ապրելով տվյալ տարածքում՝ նա դպրոց բացած չլիներ Հաթերքում, Վաղուհասում:

Թե երբ է Վաղուհասում դպրոց բացվել, ստույգ չենք կարող ասել, բայց հաստատ է մի բան՝ որ նա մի քանի անգամ է ծնունդ ապրել, ընդ որում, առնվազն երեք անգամ՝ ազատագրումից հետո:

Ինչպես հայտնի է, Վաղուհասը թուրքերը հիմնահատակ ավերել են Արցախյան պատերազմի ժամանակ: Եթե ասում ենք՝ Մարտակերտը Արցախի ամենատուժած շրջանն է, ապա Վաղուհասն էլ նրա ամենատուժած գյուղն է: Ոչ մի տուն կանգուն չէր մնացել: Թշնամին այդպես է արել, որպեսզի երբ այդ տարածքն այլևս իրենց վերահսկողությունից դուրս չլինի, բնակիչներն իրենց տները վերադառնալու հույս չպահեն: Իսկ եթե դպրոցն էլ ավերեն՝ հայի սրբատունը, հաստատ ետդարձի ճանապարհը կփակեն: Այդպես էին կարծում և համոզված էին, մասնավորապես, դպրոցն էլ էին վառել, իսկ նրա գանգը՝ իրենց աչքի փուշը, պոկել ու հեռու էին շարտել, որ այլևս չհնչի: Այդպես էր մտածում ոսոխը: Այդպես էր կարծում, բայց սխալվեց իր հաշիվներում, որովհետև, ի տարբերություն նրա, հայի համար հայրենիքը սոսկ տարածք չէ, ոչ էլ պատերն են, որ եթե չլինեն, ուրեմն՝ չկա, գոյություն չունի հայրենիք:



Գյուղն արագ ոտքի կանգնեց: Առաջին հերթին դա նշանակում է բնակչության, հետևաբար՝ երեխաների թվաքանակի աճ: Նոր դպրոցն առաջվանի համեմատ լավ էր, բայց գնալով դա էլ սկսեց չբավարարել: Աշակերտները չէին տեղավորվում, դասասենյակները չէին բավարարում, դպրոցը ժամանակակից պահանջներին չէր համապատասխանում: Հրատապ էր նոր դպրոցի կառուցումը:

Ինչո՞վ են պայմանավորված գյուղում բնակչության աճի լավ տեմպերը: Եթե ասենք սոցիալ-տնտեսական պայմաններով՝ ճիշտ չէր լինի: Վաղուհասին էլ հատուկ են այն բոլոր դժվարությունները, որոնք առկա են մյուս գյուղերում, դեռ մի բան էլ ավելին: Պարզապես այստեղի մարդիկ հայրենասիրությունը այլ ձևով են ընկալում: Դպրոցի տնօրեն Դոնարա Գրիգորյանը, որը հարևան Հաթերք գյուղից է, պատմում է, որ դեռ այնտեղ եղած ժամանակ, իր համագյուղացիներից, որոնց հայրենասիրությունը և Արցախյան շարժման մեջ ունեցած ակտիվությունը հայտնի է բոլորին, վաղուհասցիների հայրենասիրության մասին մի առանձին հարգանքով էին արտահայտվում: Իսկ հայրենասիրությունը միայն լավ կոչվել չէ, այլ նաև հայրենի հողում ամրանալը, երեխաներ բազմացնելը: Ամեն բնակավայր իր գեներտիկ հատկանիշներն ունի: Վաղուհասցիների ամենաբնորոշ հատկանիշը բնական կյանքով ապրելն է, բազմադուրս ընտանիքներ ստեղծելը: Տեղին է հիշել, թե ինչ էր պատգամում երիտասարդներին ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանը, երբ գալիս էր իր հայրենի Ծմակահող: Նա խորհուրդներ էր տալիս համագյուղացիներին, իսկ տղաներին՝ Վաղուհասից աղջիկ ուզել, ասում էր՝ նրանց կամայք երեխաներ շատ են բերում: Տարիներ առաջ Վերին Հոռաթաղ գյուղի դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանը հանդես էր եկել մի նախաձեռնությամբ. գյուղի ութամյակի կարգավիճակը միջ-

համակողմանի ստուգումներ իրականացրեց Վաղուհասի միջնակարգում: Դպրոցը կրում է Գրիշա Մուրադյանի անունը. մեկն այն 39 շրջանավարտներից, ովքեր իրենց կյանքով ապահովել են հայրենիքի ազատագրումը:

ՏԵՍՈՒՉՆԵՐԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցը վերջին անգամ տեսչավորվել է 2008թ. հոկտեմբերին: Հանձնաժողովը, ինչպես այս անգամ, ղեկավարում էր Օմիկ Ասրյանը, ով այն ժամանակ տեղեկանքում գրել էր դպրոցի շենքային պայմանների բարելավման անհրաժեշտության մասին և հանդիպման առաջին իսկ պահից շնորհավորեց կոլեկտիվին՝ նոր, երկհարկանի, գեղեցիկ դպրոց ունենալու առթիվ՝ ապահովված անհրաժեշտ գույքով, հարստացրած ուսումնական-թական բազան ֆիզիկա, քիմիա-կենսաբանություն, աշխարհագրություն, պատմություն և արտադրության: Հի կարելի ասել, որ ամեն ինչ լավ է: Դպրոցը չունի մարզական և միջոցառումների դահլիճ, ապահովված չէ մարզական գույքով, կահավորված են 4 առարկայական կաբինետներ՝ պատմության, քիմիա-կենսաբանության, ՆԶՊ և համակարգչային: Վատթար պայմաններում է հսկված մասնաճյուղը թե՛ շենքային, թե՛ կահավորվածության առումով: Բայց այս հարցերն էլ ժամանակի ընթացքում կլուծեն: Կարևորը՝ որ երեխաների խնդիր չկա այստեղ: Ցավոք, այսօր դպրոցներ ունենք գյուղերում, որ կառուցվել, բայց գնալով աշակերտների թիվը նվազում է: Վաղուհասը Արցախի բացառիկ գյուղերից է, որը կայուն աճում է: Դպրոցն ունի 30 մանկավարժ և 8 ուսումնառական աշխատող, իսկ ավանդի մասնաճյուղում՝ 7 մանկավարժ և 2 ուսումնառական աշխատող: Բոլոր առարկաները դասավանդում են մասնագետ ուսուցիչները: Վաղուհասի դպրոցում 10 ուսուցիչ ունի մեկ և ավելի դուրյք ծանրաբեռնվածություն, ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 15,3 ժամ է: Սովորում է



Մակարգի հասցնելու համար ընտանիքներին հորդորել էր ավելացնել երեխաների թիվը ու սկսել էր ուսուցիչներից, առաջին օրինակն էլ ինքը տվեց: Այս առնչությամբ արժե հիշել նաև Հաղորտի գյուղից երջանակահիշատակ Նորայր Ավետիսյանի մի պատմությունը իրենց գյուղից Գրիշա քեռու մասին, որը բազմազավակ հայր էր: Մի ծնողական ժողովում իմանալով, որ ուսուցիչները ժամերի պակաս ունեն, հանդիմանել էր նրանց՝ ասելով, մենք պարտավոր չենք երեխաներ բերել, որ դուք ժամերով ապահովվեք, դուք էլ շարժվեք: Այս առումով Վաղուհասի դպրոցի ուսուցիչների օրինակը վարակիչ է: Ընտանիքում չորս երեխան Վաղուհասում նվազագույն չեն է համարվում: Ուսուցչուհիներ Հայկանուշ Պետրոսյանը, Վալենտինա Հայրապետյանը, Նինա Վարդանյանը, Լարիսա Ղարախանյանը, զինղեկ Արմեն Սևյանը (չորրորդ երեխան շուտով կծնվի) և ուրիշներ այդքան ունեն: Ավելորդ չէ ասել, որ գյուղապետն էլ այդ շարքում է: Գյուղն ունի 600 բնակիչ, որից 100-ը մինչև հինգ տարեկան երեխաներ են: Դե իհարկե, այս թվով առաջ գնալու դեպքում դպրոցը պետք է ընդարձակվեր: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը մի հանդիպման ժամանակ հայտարարել է, որ կառավարությունը ամենից շատ ուշադրություն է դարձնելու այն համայնքներին, որտեղ բնակչության աճի տեմպերը բարձր են: Եվ զարմանալի չէ, որ Վաղուհասի դպրոցը կարճ ժամանակում ևս մի նոր ծնունդ ապրեց: 2011թ. շահագործման հանձնվեց դպրոցական նոր շենքը, որի կառուցումն իրականացվել է «Հայաստան համահայկական հիմնադրամի» և կառավարության համաֆինանսավորմամբ: Ուսումնական տարվա ավարտին մոտ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պետական տեսչության հանձնաժողովը



151 աշակերտ և մեկ նախապատրաստական խումբ՝ 17 երեխայով: Նախորդ՝ 2008 թվականի տեսչավորման ժամանակ դպրոցում սովորում էր 101 աշակերտ: Խրախուսելի է, որ անցած հինգ տարիների ընթացքում դպրոցի աշակերտների թիվը աճել է 50-ով, և առաջիկա տարիներին կանցնի 200-ի սահմանը: Իսկ ավանդի մասնաճյուղում կոմպլեկտավորվել է 2 համակարգչային դասարան՝ 14 աշակերտի ընդգրկմամբ:

Եռօրյա տեսչական ստուգումները պարզել են, որ դպրոցում ապահովվում է ուսումնական աշխատանքների բավարար մակարդակ:

Այդ օրերին տեսուչներից յուրաքանչյուրն իր առարկայի գծով համապատասխան աշխատանք կատարեց. դասալսումներ, ստուգողական գրավորներ, սեմինարներ, ցուցաբերեց մեթոդական օգնություն: Մատնացույց արեցին թերությունները, ի հայտ բերեցին առաջավորը, որը վերջում իր արտացոլումն ստացավ տեղեկանքի ձևով և քննարկվեց մանկավարժական խորհրդի նիստում, որին մասնակցում էին շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ ժասմեն Դավթյանը, բաժնի մասնագետ՝ ինչպես արդեն նշեցինք, բռնագաղթից հետո դպրոցի առաջին տնօրեն Արմինե Մուրադյանը:

ՈՍԱՆ

Դպրոցի տնօրեն Դոնարա Գրիգորյանը, ով ունի երկար տարիների ղեկավար աշխատանքի փորձ, կարողացել է ստեղծել համերաշխ մանկավարժական կոլեկտիվ, որի յուրաքանչյուր անդամ իր ուժերի չափով աշխատում է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը բարելավելու համար:

ԼԱԿ ԴՊՐՈՑԸ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՎԱԾ Է ԼԱԿ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐՈՎ

Տեղեկանքում, ինչպես կարգն է, համծնաժողովի նախագահը համադրելով ներկայացրել է ուսման առաջադիմությունը և որակը ըստ դպրոցի կիսամյակային, ԳԹԿ-ի կողմից անցկացված ընթացիկ արտաքին ստուգումների և տեսչավորման արդյունքների: Այս կրթությանն էլ զերծ չէ դպրոցների մեծամասնության ընդհանրական թերություններից:

Մենք չենք անդրադառնա այն հարցին, թե ինչու կիսամյակային զննատեսակները մի բան են ասում, ԳԹԿ, տեսչության կողմից ստուգումները՝ մեկ այլ բան: Թե ինչու 6-րդ դասարանում մաթեմատիկայից առաջադիմությունը 56% է, որակը՝ 0%, 8-րդ դասարանում՝ 56% է, որակը՝ 0%, 11-րդ դասարանում հայոց լեզվից առաջադիմությունը 50% է, որակը՝ 0%: Բայց կանոնադաշտում համաձայնագրի նախագահի արձանագրության այն մասին, որ 10-րդ դասարանում կենսաբանությունից առաջադիմությունը կազմել է 92%, որակը՝ 38%: 7-րդ դասարանում քիմիայից առաջադիմությունը 71% է, որակը՝ 52%, այսինքն՝ բարձր առաջադիմություն և ուսման որակ է ապահովվել քիմիա և կենսաբանություն առարկաներից՝ շնորհիվ ուսուցչուհի Լիլիթ Ազիզյանի, որը սրտացավ և բարեխիղճ վերաբերմունք է ցուցաբերում աշխատանքի հանդեպ: «Պետք է գիտակցել, որ լավ դպրոց ունենալու համար նախ պետք է ունենալ լավ ուսուցիչ: Պետք է բարձրացնել ուսուցչի պատասխանատվությունը ուսումնա-

ստում էր, որ դպրոցում թեկուզ մեկ լավ ուսուցիչը քարշող ուժի դեր է կատարում. նա իր հետևից տանում է մյուսներին:

Ըստ աշխարհագրության տեսուչ Տ. Պետրոսյանի՝ ժիրայր Արյանը տիրապետում է առարկային, դասը մատուցում պարզ, մատչելի, ուշադրություն է դարձնում դասի բովանդակությանն ու աշխարհագրական հասկացությունների մեկնաբանմանը, մեծ տեղ է հատկացնում վիճակագրական տվյալների ու համեմատական մեթոդների օգտագործմանը՝ կապ ստեղծելով 33-ի և 173-ի հետ, բացի դասագրքից, տալիս է նաև լրացուցիչ գրականությունից տեղեկություններ: 2014թ. նրա երեք աշակերտներ մասնակցել են աշխարհագրության օլիմպիադայի շրջանային փուլին, որոնցից մեկը գրավել է 2-րդ տեղը և մասնակցել համրապետական փուլին:

ԼԱԿ ՌԻՍՈՒՑԻՉ ՌԵՍԵՆԱԼԸ ԵՐՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է

Թե՛ տեսուչ Վ. Ավետիսյանը, թե՛ տնօրենը և թե՛ գործընկերները քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի Լիլիթ Ազիզյանի մասին ամենալավ խոսքերն են ասում: ՏՆօրենը



խոստովանում է, որ ինչ նա անցել է իրենց մոտ աշխատանքի, դպրոցը թեքվել է դեպի բնագիտական ուղղություն: Նա մասնակցել է ԿԳԵ-ի կազմակերպած դասընթացներին. 2011-2012-ին՝ քիմիայից, 2013-2014-ին՝ կենսաբանությունից: Ունի մշակումներ, ինքնակրթության պլանավորումներ, ստեղծագործական աշխատանք՝ ռեֆերատներ, գործնական աշխատանքի վերաբերյալ հատուկ պատճառներ (ինքնաշեն): Իր գործընկերուհու՝ երիտասարդ ուսուցչուհի Կարինե Սլյանի և լաբորանտ Անահիտ Նարիմանյանի հետ համերաշխ համագործակցությամբ ճաշակով, ներդրակ կախվորել է կաբինետը, առկա են պարբերական աղյուսակ, էլեկտրաքիմիական ակտիվության շարք, ցուցապատառներ, մուլյաժներ, հետաքրքրասերի անկյուն, մոդելներ, դիտողական պարագաներ, բյուլետեններ՝ «Մետաղների աշխարհում», «Ռեկորդային բույսեր», պատի թերթեր՝ «Վիկտորինա» և այլն: Բավարար են առկա սարքավորումները, նյութերը՝ պիտակավորված և ճիշտ խմբավորված:

Պատին մեծ տեղ են զբաղեցնում աշակերտների՝ օլիմպիադաներում ստացած պատվոգրերն ու գովասանագրերը:

Ինքս ներկա դաս 10-րդ դասարանում կենսաբանության դասին: Այն մարդու սաղմնային զարգացման մասին էր, մի շատ նուրբ և բարդ թեմա:

Դասին ակտիվորեն մասնակցում էր ողջ դասարանը՝ 13 աշակերտ (8 տղա, 5 աղջիկ): Ուսուցչուհին նախատեսել էր անցկացնել համակարգչային դաս: Սակայն ինֆորմատիկայի կաբինետը զբաղված լինելու պատճառով դասն անցավ ավանդական մեթոդով՝ կալիփոնով, պատմելով, հարցուպատասխանով: Բայց դա չխանգարեց, որ այն անցնի հետաքրքիր, լինի հասկանալի ու մատչելի: Առավել ակտիվ էին տղաները. գրագետ պատասխանում էին ուսուցչուհու հարցերին՝ տիրապետելով բոլոր տերմիններին: Այն, ինչ պիտի ցույց տար համակարգիչը, ուսուցչուհին գծեց գրաստիպակի: Զամոզվում էս, որ կարևոր չէ, թե ինչ մեթոդով ես առաջնորդվում՝ ավանդակա՞ն, թե՛ ժամանակակից,

լի հեշտ և լավ է հարմարվում պայմաններին, ուժեղ է իր տեսակի մեջ: Բնությունը ինքնակարգավորման հատկություն ունի, և պատահական չէ, որ բոլոր պատերազմներից հետո տղաներ ավելի շատ են ծնվում: Վաղուհասը՝ դրա վառ օրինակը:

Առկա է ուսուցիչ-աշակերտ սերտ կապը: Ուրախալի է, որ կան խելացի, կայուն գիտելիքների տեր աշակերտներ: Նրանք ազատ լուծում են բարդ խնդիրներ: Նրա աշակերտներն ամեն տարի մասնակցում են առարկայական օլիմպիադաներին և արժանանում մրցանակների:

Լիլիթ Ազիզյանը պահանջկոտ և կայացած ուսուցչուհի է: Առարկային տիրապետում է գերազանց:

«Գյուղի երեխաների ընդունակություններն ավելի շատ են, նրանք ավելի կարգապահ են, բայց նրանց զարգացման հնարավորությունները քիչ են, չունեն այն պայմանները, ինչ քաղաքում է», - ասում է Լ.Ազիզյանը: Ինքը քաղաքում լավ ուսուցիչներ է ունեցել, գիտի, թե ինչ երջանկություն է դա: Ուզում է, որ իր գավալը (որ հիմա առաջին դասարանում է) և մյուս երեխաները նույնպես վայելեն այդ երջանկությունը:

Լիլիթ Ազիզյանը պարտող, ստեղծագործող ուսուցչուհի է: Այսօր, երբ շատերը գյուղից դուրս գալով և բարձրագույն կրթություն ստանալուց հետո չեն վերադառնում իրենց բնակավայրը, Լիլիթը ապրած և լավ կրթություն ստացած լինելով քաղաքում՝ ընտրել է գյուղը:

Մինչ այսօր էլ նա կապված է քիմիայի և կենսաբանության իր ուսուցիչների՝ Արիմա Գրիգորյանի և Գեղեցիկ Բաբայանի հետ, խորհրդակցում է մեթոդամասնագիտական հարցերի շուրջ: Նա իր աշակերտների հետ է օրվա մեծ մասը: Նրանց հետ անշահախնդիր պարապում է դպրոցում և տանը: Միշտ կտեսնես աշակերտներով շրջապատված, դասի գալիս, տուն գնալիս, դասամիջոցին: Նրան սիրում են բոլորը: Օրինակելի է ամեն ինչում:

Իսկապես լավ ուսուցիչը տվյալ բնակավայրի համար գանձ է, ազգային արժեք:

Խրախուսման հետաքրքիր ձև է, երբ տնօրենը հատուկ շնորհակալություն է հայտնում ուսուցչուհու ընտանիքի անդամներին՝ առանձնապես սկեսրոջը (դպրոցի փոխտնօրենն է)՝ պայմաններ ստեղծելու համար, որ ուսուցչուհի հարսը կարողանա առաջ գնալ, զարգանալ իր մասնագիտության մեջ:

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Մանկավարժական խորհրդի նիստում համաձայնագրի նախագահ Օ. Արյանը մոտ մեկ ժամ ներկայացրեց տեղեկանքը: Ոչ մի թերություն չի վրիպել նրա աչքից, առանձնապես դպրոցավարության, փաստաթղթերի վարման կարգում: Սրանք հեշտ վերացնելի թերություններ են: Կրթության շրջանային բաժնի վարիչ Ժ. Դավթյանը հարցադրումը տարավ այս ուղղությամբ. դպրոցի գերագույն նպատակը երեխաներին ուսուցանելն ու դաստիարակելն է: Իսկ այն ամենը, ինչ ունենք, գործիքներ են, որ պետք է օգտագործվեն աշխատանքը կատարելիս: Գլխավոր դեմքը դպրոցում աշակերտն է և ուսուցիչը, ովքեր անմիջականորեն դասարանում շփվում են միմյանց հետ: Մնացած օղակները վերահսկող, օգնություն ցույց տվող օրգաններ են, իսկ աշխատողը ուսուցիչն է: «Հիմա ես նայում եմ, նստած մարդիկ մեծամասամբ երիտասարդներ են, կամ միջին տարիքի, որոնց դեռ երկար տարիների աշխատանք է սպասվում, բայց, ցավով փաստում եմ, որ այս մարդկանցից մատների վրա հաշվվում են նրանք, ովքեր այսօր արդյունք ունեն: Բոլորիս նպատակը սա է՝ արդյունք ունենալ: Թե ինչպես, ինչ մեթոդով՝ կարևոր չէ: Գուցե Ազիզյանն էլ է ավանդական մեթոդով աշխատում, այնուամենայնիվ, արդյունք տալիս է: Գուցե մոր մեթոդներ է օգտագործում: Առաջին տարին չէ, արդեն երրորդ, չորրորդ տարին է, որ դուք օլիմպիադայում հաղթող աշակերտներ եք ունենում քիմիա-կենսաբանությունից: Երբևէ ձեր մեջ միտք ծագե՞լ է երիտասարդ ուսուցչուհու մոտ դասալսում կատարել, տեսնել ինչ է անում այդ աղջիկը, որ արդյունք է տալիս: Պիտի ընդօրինակել նրանց, ովքեր լավ արդյունքներ ունեն, որովհետև սա է մեր ամբողջ գործունեության նպատակը»: Կրթության բաժնի վարիչի այս խոսքերը պետք է դիտարկել որպես դպրոցի հետագա գործունեության համար ուղեցուցիչ կետեր:



Կարևորվեց ինքնակրթության դերը: Բաժնի վարիչը ուրախ լուր հաղորդեց. առաջիկայում դպրոցը կունենա համացանց, որը լավ հնարավորություններ կստեղծի օգտվելու տեղեկատվական հարուստ բազայից, «Dasaran.am» ցանցը այստեղ էլ կգործի, կօգտվեն էլեկտրոնային օրագրերից, և «Լուսավորությունը այս անտառներն էլ կհասնի», - լավատեսություն հայտնեց Ժ. Դավթյանը:

Արտաքին լուսավորությունը, իհարկե, կարևոր համագանձ է, բայց ավելի կարևոր է ներքին լույսը, որ ունենում է մեծատառով ուսուցիչը՝ անսպառ էներգիայով օժտված:

Վաղուհասում կան խելացի աշակերտներ, կա գեներոֆոնը, կա ներուժ, որ հմտորեն օգտագործելով՝ կարելի է հասնել լավ արդյունքների: Սպասենք և հուսանք:

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ՄԵՆԵՐԸ ՎԵՐԱԴՂԱՌՆՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑ

Լրացավ Արամ Շեկյանի ծննդյան 100-ամյակը

Մարտակերտի շրջանի Առաջաձորի միջնակարգ դպրոցը Արցախի հիմնավոր և փառավոր ավանդույթներ ունեցող կրթության կենտրոններից է, լայն ճանաչման ու բարձր պարզանքների արժանացած: Խորհրդային տարիներին այստեղ աշխատում էր բարձրակարգ ուսուցիչների մի համախումբ՝ գրեթե բոլոր առարկաներից, ինչի շնորհիվ դպրոցը քայլում էր կրթության առաջամարտիկների շարքում:

Կրթության փառքն իր գազաթնակետին հասավ, երբ ղեկավարման լծակն իր ձեռքն առավ իրապես գիտնական-մանկավարժ Արիս Պողոսյանը: Նրա հմուտ ղեկավարչական աշխատանքը պարարտ հող ստեղծեց կրթության մանկավարժների մասնագիտական տաղանդի բացահայտման ու ծաղկման համար: Այդ տարիներին Առաջաձորի դպրոցը բազմակողմանի զարգացած, տաղանդաշատ շրջանավարտների թողարկման կուռ դարբնոց էր: Առաջաձորի միջնակարգ ավարտած բոլոր լավագույն շրջանավարտները, անկախ ընտրած մասնագիտությունից, ունեն արվեստի և գրականության մեծ ներդրումներ: Արամ Շեկյանի մտածողությունը: Խորհրդային կրթակարգի փլուզման և Արցախյան պատերազմի հետևանքով բոլոր կրթության կենտրոնները կորցրեցին իրենց փառքը: Այսօր ավելի քան մեկ դարյա կենսագրություն ունեցող դպրոցն աստիճանաբար սկսում է վերագտնել իրեն՝ կրթությունը որպես երկրի ռազմապաշտպանության կարևոր ուղղություն որդեգրած պետական քաղաքականության շնորհիվ:

2012թ. օգոստոսի 14-ին դպրոցն անվանակոչվեց Արիս Պողոսյանի անունով, իսկ բակում կանգնեցվեց նրա կիսանդրին: Նախաձեռնության հեղինակների նպատակն էր մեծ անհատի նկատմամբ ունեցած հարգանքով, բարի հուշերով վերակենդանացնել կրթական լավագույն ավանդույթները: Օրերս դպրոց «վերադարձավ» նրա հայտնի դեմքերից մեկը, կրթության և մեկ հիմնասյուն՝ Արամ Ներսեսի Շեկյանը: Առիթը կրթության մեծ երախտավորի 100-ամյա հոբելյանն էր, որը նշվեց Շեկյան գերդաստանի և դպրոցի տնօրինության հետ համատեղ:

Ա. Շեկյանը ծնվել է 1914թ., Մարտակերտի շրջանի Չլդրան (Վրդիկալեր) գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Չլդրանի և Առաջաձորի դպրոցներում: Այնուհետև ավարտել է Շուշիի մանկավարժական տեխնիկումը, երկամյա ֆիզմաթ ֆակուլտետը, Բաքվի մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է Առաջաձորի, Չլդրանի, Հայադի, Վաղուհասի, Քոլատակի, Վանքի դպրոցներում՝ հիմնականում որպես տնօրեն, ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ:

Վաստակաշատ մանկավարժի, հայրենասերի, քաղաքացու հոբելյանը նվիրված միջոցառումը սկսվեց դպրոցից դուրս՝ Մեծ Հայրենական զործուճեությունը հիշատակելիս:



Մեծ Հայրենական զործուճեությունը հիշատակելիս Վանքի միջնակարգ դպրոցի տնօրեն Վարյա Ավանեսյանը, ընկերների բնորոշմամբ՝ շեկյանագետը, ում էլույթը և հուշերը հարգանքի ու ակնածանքի տուրք էին սիրելի ուսուցչին:

ԼՂՀ խորհրդարանի աշխատակից Կամո Ազատյանը իրեն համարում է այն երջանակներից, ով եղել է Ա. Շեկյանի սիրելի աշակերտն ու հարևանը: Նա նույնպես իր ակնածանքն արտահայտեց իր ուսուցչի հանդեպ՝ գնահատելով մեծ մանկավարժի գործունեությունը, ներկայացնելով նաև հուշեր: Նա ցանկություն հայտնեց նման միջոցառումները դարձնել ավանդական՝ լավագույն մեծերի համար, քանզի դրանք ոչ միայն մեծարումի միջոցառումներ են, այլև ուսանելի դաս՝ ներկա սերնդի համար:

Ա. Շեկյանի մասին՝ որպես նրա նախնի սան և աշակերտի ծնող, իր սրտի խոսքն ասաց համագյուղացի Գրիշա Առուշանյանը: Վերջինս կարդաց Ա. Շեկյանի մի խոսք իր բանաստեղծությունը:



Ա. Շեկյանի սերունդը գեներալկորեն օժտված է նրա լավագույն հատկանիշներով: Հինգ զավակներից մեկը՝ Լեոնարդ Շեկյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու է, դոցենտ, աշխատում է Երևանի պետական համալսարանում: Մյուս որդին՝ Լավրենտ Շեկյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր է, դասախոսում է Երևանի ճարտարագիտական համալսարանում: Գերդաստանի նահապետի հոբելյանին տարբեր վայրերից գյուղ էին ներկայացել Լուսինա և Ամալյա դուստրերը (եման հիվանդության պատճառով ներկա չէր), թոռները: Նրանց մեծ մասը գնացել է պապի ճանապարհով:

Միջոցառմանը սրտի խոսք ասաց թոռնուհին՝ Արուսյակ Քոլյանը, ով մաթեմատիկայի և հոգեբանության ուսուցչուհի է Երևանի հ. 88 դպրոցում: Նա խոստովանեց, որ իր աշխատանքը լավագույն ձևով



գիտությունների թեկնածու Լեոնարդ Շեկյանն ասաց, որ ինքը նախապես ցանկանում էր հուշաբան դակը տեղադրել ֆիզիկայի լաբորատորիայում, սակայն դպրոցի տնօրեն Նելլի Աբանեսյանը, ով նաև եղել է մեծ մանկավարժի սանը և որոշ ժամանակ՝ գործընկերը:

Միջոցառմանը ներկա էր Մարտակերտի շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ ժամեն Դավթյանը: Նա իր երախտագիտությունը հայտնեց միջոցառման կազմա-

կերպիչներին՝ վաստակաշատ մանկավարժների գործունեությունը արժևորելու բարի ավանդույթը վերականգնելու համար: «Լավագույն ուսուցիչները, ինչպիսին Ա. Շեկյանն է, ուղենիշ են ծառայում հետնորդների համար», - ասաց նա:

Ա. Շեկյանի աշակերտներից շատերն այսօր շարունակում են նրա գործը: Նրանցից է Վանքի միջնակարգ դպրոցի տնօրեն Վարյա Ավանեսյանը, ընկերների բնորոշմամբ՝ շեկյանագետը, ում էլույթը և հուշերը հարգանքի ու ակնածանքի տուրք էին սիրելի ուսուցչին:

ԼՂՀ խորհրդարանի աշխատակից Կամո Ազատյանը իրեն համարում է այն երջանակներից, ով եղել է Ա. Շեկյանի սիրելի աշակերտն ու հարևանը: Նա նույնպես իր ակնածանքն արտահայտեց իր ուսուցչի հանդեպ՝ գնահատելով մեծ մանկավարժի գործունեությունը, ներկայացնելով նաև հուշեր: Նա ցանկություն հայտնեց նման միջոցառումները դարձնել ավանդական՝ լավագույն մեծերի համար, քանզի դրանք ոչ միայն մեծարումի միջոցառումներ են, այլև ուսանելի դաս՝ ներկա սերնդի համար:

Ա. Շեկյանի մասին՝ որպես նրա նախնի սան և աշակերտի ծնող, իր սրտի խոսքն ասաց համագյուղացի Գրիշա Առուշանյանը: Վերջինս կարդաց Ա. Շեկյանի մի խոսք իր բանաստեղծությունը:

Ա. Շեկյանի սերունդը գեներալկորեն օժտված է նրա լավագույն հատկանիշներով: Հինգ զավակներից մեկը՝ Լեոնարդ Շեկյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու է, դոցենտ, աշխատում է Երևանի պետական համալսարանում: Մյուս որդին՝ Լավրենտ Շեկյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր է, դասախոսում է Երևանի ճարտարագիտական համալսարանում: Գերդաստանի նահապետի հոբելյանին տարբեր վայրերից գյուղ էին ներկայացել Լուսինա և Ամալյա դուստրերը (եման հիվանդության պատճառով ներկա չէր), թոռները: Նրանց մեծ մասը գնացել է պապի ճանապարհով:

Միջոցառմանը սրտի խոսք ասաց թոռնուհին՝ Արուսյակ Քոլյանը, ով մաթեմատիկայի և հոգեբանության ուսուցչուհի է Երևանի հ. 88 դպրոցում: Նա խոստովանեց, որ իր աշխատանքը լավագույն ձևով



կազմակերպելու համար շատ օգնել են այն դասերը, որ ստացել է պապից ու տատից (տատը՝ Զերսիկ Շեկյանը, պատմության ուսուցչուհի էր):

Շեկյան գերդաստանի այսօրվա ավագը՝ Լեոնարդ Շեկյանը, երախտագիտություն հայտնեց դպրոցի տնօրինությանը և շրջվարչակազմի կրթության բաժնին՝ հոր 100-ամյա

հոբելյանը նշելու նախաձեռնության մեջ ակնկալում համար, որը ոչ միայն հարգանքի տուրք է մեծ մանկավարժին, այլև դպրոցի լավագույն ավանդույթները վերականգնելու և նպաստող քայլ: Նա պատրաստակամություն հայտնեց իր հնարավորություններով աջակցել դպրոցի զարգացմանը: Առաջարկեց նաև նյութեր հավաքել դպրոցի պատմությունը ստեղծելու համար: Նա ընտանիքի բարեկամ՝ «Կրթությունը և գիտությունը Արցախում», «Բնագետ» հանդեսների պատասխանատու Կամո Աբայանի և ԵՊՀ-ի անունից մասնագիտական գրականություն հանձնեց դպրոցին:

Ա. Շեկյանը մահացել է 80 տարեկանում: Ապրում էր գյուղի հոգսերով, հատկապես ծանր էր տանում, երբ երիտասարդները զոհվում էին ազերիների դեմ մղված մարտում: Նա այս աշխարհից գնաց խաղաղված, երբ արդեն Բիշքեկում հրադարի պայմանագիրը կնքված էր, և անթաքույց ուրախ էր, որ վերջապես թուրքի ոտը կտրվեց Ղարաբաղից:

Մեծ մանկավարժի հոբելյանական միջոցառման մասնակիցներն իրենց հարգանքի տուրքն արտահայտեցին նաև Շեկյանների տոհմական գերեզմանն այցելելով: Հուշերը կրթության երախտավորի մասին շարունակվեցին նրա հարկի տակ:

Ներկայացնենք երախտապարտ աշակերտների գնահատանքի խոսքը Արամ Շեկյանի մասին:



Նելլի ԱՅՆՆԵՅԱՆ.

Առաջաձորի միջնակարգ դպրոցը դարից ավելի պատմություն ունի: Յուրաքանչյուր սերունդ իր գործունեության մեջ մի նոր բան է ավելացրել, հարստացրել և սերունդներին ավանդել հարուստ ժառանգություն: Բազմաթիվ են այն երախտավորների անունները, ովքեր իրենց նվիրել են գյուղի կրթության և դաստիարակության գործին: Նրանցից մեկն Արամ Շեկյանն է:

Դժվար է այսօրվա սերնդին ներկայացնել մի ուսուցչի կերպար, ով խորհրդային դպրոցի մարմնավորումն էր և բոլոր ժամանակների ուսուցչի հավաքական կերպարը: Իր գործին անմնացորդ նվիրված, վաստակը սաների հաջողությամբ չափած, ծայրահեղ համեստ, առօրյա հոգսերի մեջ թաղված, բայց հոգսերն իրենից վանող ուսուցչի կերպարը: Գուցե այսօրվա սերնդին խորք են մարդկային նման տեսակը, նման որակները, սակայն շատերին, հատկապես իմ սերնդակիցներին հարազատ է նման կերպարը, և ինչքան ժամանակը հեռանում է, այնքան խորն ենք զգում նմանների կարիքը:

Իր ներկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում Ա. Շեկյանն ունեցել է մանկավարժական և հասարակական բերում գործունեություն: Տարիներ հետո փորձում ենք ի մի բերել այն հնարներն ու գաղտնիքները, որոնցով նա

հրապուրում էր իր աշակերտներին: Գտնում ենք, որ դա Ա. Շեկյան ուսուցչի կայուն մանկավարժական սկզբունքներն էին, որոնց նա հավատարիմ մնաց իր ամբողջ կյանքի ընթացքում: Այսօր մանկավարժական դասագրքերում ու մեթոդների մեջ չենք գտնի դրա բացատրությունը, որովհետև դրանք չէին ենթարկվում որևէ կանոնակարգի: Դասի պարզ ու մատչելի բացատրություն՝ շաղախված անսպառ հումորով, ահա Ա. Շեկյանի յուրահատուկ մեթոդը, որին իմ հետագա մանկավարժական 30-ամյա գործունեության ընթացքում չհանդիպեցի ոչ մի մանկավարժի մոտ: Ա. Շեկյանին աշակերտած յուրաքանչյուր աշակերտ, անկախ մասնագիտական կողմնորոշումից, գիտեր Նյուտոնի օրենքները, ձողակաճանցում ուժը, բազմաթիվ ֆիզիկական երևույթներ ու բանաձևեր, հաստատուններ: Դասի ամենաթեժ պահը նա կարող էր համեմել անկողնով, ընդ որում, հարյուր անգամ պատմած, բարձրացնել աշակերտի տրամադրությունը, նույն հաջողությամբ կենտրոնացնել նրանց և հաղորդել նոր նյութը: Այս յուրահատուկ մեթոդով է նա ձգել իր աշակերտներին, տարել ֆիզիկայի կախարակական աշխարհը և իրեն վարձատրված ու երջանիկ զգացել, երբ իր սաներն ընտրել են իր մասնագիտությունը: Ա. Շեկյանի աշակերտներից շատ-շատերն այսօր շարունակում են նրա գործը:

Ա. Շեկյանն իր կենսագրության մեջ հավաստում է, որ բարեխղճներն է կատարել իրեն տրված հանձնարարությունները: Քիչ է ասել՝ բարեխղճներն, դա բարձր պատասխանատվություն էր և պարտականություն:

Նա հաճախ էր գալիս դպրոց, կիսվում գործընկերների հետ, հատկապես՝ երիտասարդների: Հավատում էր, որ դպրոցն այն կետն է, ուր կարող են լուծվել նույնիսկ ազգային խնդիրները:

Ա. Շեկյանը այդպես մնաց հավատարիմ ու հավատավոր կրթությանն ու դպրոցին, և եղավ այն ձգողական ուժը, որի կերպարն այսօր էլ մշտապես նրա սաների շուրթերին է:



Վարյա ԱՎԱՆԵՅԱՆ.

Այսօր յուրահատուկ օր է բոլորիս համար: Եկել ենք նշելու մեր դպրոցի ամենապայծառ աստղերից մեկի՝ ֆիզիկայի ուսուցչի, մեր շատ սիրելի ընկեր Արամ Շեկյանի ծննդյան 100-ամյակը: Այսօր հիշողությունների, մեծարումի օր է: Եկեք ամենայն անկեղծությամբ հիշենք ու ներկայացնենք վեներաբլան մավրի պատգամով՝ ոչինչ ավելացնելով և ոչինչ պակասեցնելով:

Ոչինչ այնպես աչքի չի զարնում, ինչպես մեծությունը, լինել հասարակ՝ հենց նշանակում է լինել մեծ: Այս խոսքերը կարծես գրվել են հենց իր համար: Նա մեծ էր ու հասարակ, մեծ մարդասեր էր ու հայրենասեր, ամսահան սիրում էր իր աշխա-



ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ՄԵՇԵՐԸ ՎԵՐԱԴՂԱՌՆՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑ

տանքն ու աշակերտներին: Եթե ուսուցիչը սիրում է իր աշխատանքը, նա լավ ուսուցիչ է: Իսկ երբ ուսուցիչը սիրում է իր աշակերտներին, ապա նա ավելի լավ ուսուցիչ է: Բայց եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտին, նա կատարյալ ուսուցիչ է:

Ես իմ աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպել եմ լավ ուսուցիչների, սակայն ինձ համար մանկավարժի բարձր չափանիշ են եղել իմ ուսուցիչները, որոնցից այսօր առանձնացնում եմ Արամ Շեկյանին, որի 100-ամյա հոբելյանն ենք նշում: Տարիներ շարունակ նա ոգեշնչման աղբյուր է եղել սերունդների համար: Նրա համար աշխարհը սկսվում է վերջանում էր դպրոցով՝ ֆիզիկայով, այն աշակերտներին սովորեցնելու մոտուցով: Հմայված իր առարկայով՝ իր հետևից տարավ շատերին: Տարված էր Նյուտոնով, Ֆարադեյով, Օհմով, Էյնշտեյնով: Առանձնակի հպարտությամբ էր խոսում այդ խիզախ մարդկանց մասին: Եթե մեկնում եկե՛ք մեծ պաթոսով չէր խոսում, գրեթե պատժում էր: Երբեմն հանձնարարում էր շարադրություն գրել որևէ գիտնականի մասին:

տուն, նույնիսկ ուշ ժամերի, տալիս առաջադրանքներ: Յուրօրինակ մարաթոն էր, վաղը պետք է հաշվետու լինեիրք և ձգտում էինք լինել առաջինը, ստուգելով միմյանց տների լույսերով և երբեմն անբուռն մնում և այդպես էլ գալիս դպրոց՝ ընկեր Շեկյանից գովեստի խոսքեր լսելու: Սկսած 6-րդ դասարանից՝ մասնակցել ենք օլիմպիադաներին:

Ա. Շեկյանի ամենամեծ նվաճումն իր աշակերտներն են, որոնք դարձել են գիտության ու տեխնիկայի և հասարակական կյանքի առաջամարտիկներ:

Ինչքան ժամանակը հեռացնում է մեզ իրարից, այնքան անուժ է՝ մոռացության տալու մեր սիրելի ուսուցիչներին, քանզի մեր ծնողների պես հեռվից մեր ճանապարհն է լուսավորում նրանց հեռագրա լույսը:



Կամո ԱՉՍՅԱՆ

- Այսօր են ներկաների դեմքերին տեսնում են միայն հպարտություն, ընկեր Շեկյանի աշակերտների, հարազատների, բոլոր այն մարդկանց, ովքեր այս կամ այն կերպ առնչություն են ունեցել նրա հետ:

Ա. Շեկյանը մեծն թունանյանի պես իր գործով անմահ է և ապրում է իր աշակերտների հիշողության մեջ: Չկա մի մարդ, թե՛ գյուղում, թե՛ գյուղից դուրս, որ հանդիպի և խոսք չասի Արամ Շեկյանի մասին: Երբ նրանց դեմքին ուրախություն, ժպիտ, ծիծաղ են տեսնում, ուրեմն՝ թեման ընկեր Շեկյանն է: Որովհետև նա ուներ սուր և դիպուկ խոսք, որը միշտ մեր հիշողության մեջ է: Նա մեծ մանկավարժ էր իր ամենախկական և լայն իմաստով: Մենք՝ խորհրդային տարիներին դաստիարակված մարդիկ, գիտենք, թե ընկեր Շեկյանը ինչքան էր նվիրված իր մասնագիտությանը: Գիտենք, թե

ինչքան դժվար է բնագիտամաթեմատիկան և առարկաների նկատմամբ սեր արթնացնել աշակերտների մեջ, բայց նա կարողացավ ոչ միայն արթնացնել, այլև բոլորիս մեջ առաջացնել նվիրվածություն դեպի այդ առարկան: Նրա մոտ՝ որպես մանկավարժի, կար մի առանձնահատուկ մեթոդիկա. նա փորձում էր դասարանի թեկուզ ամենաթույլ աշակերտին ֆիզիկայի օրենքներն ու սահմանումները հասանելի դարձնել ամենահասարակ ձևով: Նա «5» ստացողներով այնքան չէր հպարտանում, ուրախանում, որքան՝ թույլ աշակերտներով, երբ նրանք փորձում էին սահմանումները տալ: Եվ մատյանի վանդակում ոգևորված «3»-ն այնպես էր նշանակում, որ երեք-չորս վանդակ էր վերցնում: Երբ այն տարիներին չկար «կրկնուսուցում» հասկացությունը, այնպես էր դասավանդում, որ «4» և «5» գնահատականներով սովորողը, կարողանում էր ընդունվել բուհ: Ու նաև ուսանողների նկատմամբ մշտապես ուշադիր և հետևողական էր: Կիսամյակային քննություններից հետո երբ ներկայանում էինք գյուղ, անպայման պետք է հանդիպեինք ընկեր Շեկյանին, կիսվեինք նրա հետ: Ընկեր Շեկյանը կարողացել էր իր գիտելիքներն ու ողջ եռանդը անմնացորդ փոխանցել աշակերտներին:

Նա չէր սիրում այն աշակերտներին, ովքեր փորձում էին ինչ-որ ձևով արդարանալ, որ չեն հասցրել: Շեկյանը ջղայնանում էր և ասում. «Չէ, արդեն գրպաններումս լոբի ե՛տիում», ինչին պիտի հետևեր պատիժը, որն այնքան դաստիարակիչ էր լինում, որ մի ամ ժամանակ անց այդ աշակերտը ներկայանում է և ասում՝ կներեք, ես արդեն դասը սովորել եմ, թողեք պատասխանեմ: Շեկյանի այս մեթոդիկան այդ տարիներին լավ հայտնի էր: Առաջածորի դպրոցն ուներ փայլուն ուսուցիչների մեծ համաստեղություն, դա այն տարիներին էր, երբ դպրոցը ղեկավարում էր բոլորիս կողմից սիրված Արիս Պողոսյանը:



նը: Դպրոցի համբավը տարածվեց ոչ միայն շրջանում ու մարզում, այլ նաև հանրապետությունում: Ես չեմ հավատում, որ մեր շրջանավարտներից մեկը մի օր չի չի ընկեր Շեկյանին:

Նա ուներ մեծ ակտիվություն և հասարակության շրջանում, մեծ հարգանք էր վայելում գյուղում: Այն

Սիշտ նախածեռնողի դերում էր՝ լինել դա ջրի հարց կամ բարեկարգման: Նա ապրում էր հասարակության կյանքով: Այսօր ման մարդկանց մասին խոսելը նաև դաստիարակիչ դեր ունի մեր սերունդների համար: Ես՝ որպես այս դպրոցի շրջանավարտ, ընկեր Շեկյանի աշակերտ, իմ երախտագիտությունն եմ հայտնում ընկեր Շեկյանին և մեր բոլոր ուսուցիչներին. եթե կյանքում հասել ենք ինչ-որ հաջողությունների, մեր ուսուցիչների շնորհիվ է:

\*\*\*

Առաջածորի դպրոցը խորհրդային տարիների ութամյա տիպային շենք է՝ նախատեսված 400 աշա-

կերտի համար: Այսօր այստեղ սովորում է 127 աշակերտ: Դպրոցն արձանագրել է որոշակի հաջողություններ: Աշակերտները մասնակցում են տարբեր մրցույթների: «Տարվա լավագույն աշակերտ» հանրապետական մրցույթի երկրորդ մրցանակակիրը այս դպրոցի սանն է:

Դպրոցը օրերս թիմ է ուղարկելու Հայաստան՝ «Հայ ասպետ» հեռուստախաղին մասնակցելու: Այս տարի և աշակերտներ ունի հանրապետական օլիմպիադայում, մեկ հոգի քիմիայից և կենսաբանությունից (նա հիմա ընտրել է բժշկի մասնագիտությունը) և մեկ հոգի՝ մաթեմատիկայից:

Դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Տանիքը վերջերս են փոխել, ջեռուցումն իրականացվում է փայտի վառարանով, որը բավականին դժվարացնում է դասաար-



ցեղ բնականոն անցկացնելը: Մարզադահլիճը ձմռան շրջանում չի տաքացվում: Արտադասարանական աշխատանքները ջեռուցման բացակայության պատճառով ձմռանային շրջանում չեն կարողանում պատշաճ կարգով կատարել:

Օրերս գյուղում սկսեց գործել համացանցը: Դպրոցն էլ երկի շուտով կունենա:

Բոլոր հիմքերը կան, որպեսզի Առաջածորի դպրոցը կարողանա կրկին կանգնել իր առաքելության բարձր աստիճանահարթակին:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽԱՐԻՄՍԻ Է ԶՊՈՒՄ ԵՎՍ ՄԻ ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՅ ՍԵՐՈՒՆԴ

Վերջին զանգի դողանքներ հնչեցին նաև Արցախի հերոս, «Ոսկե Արծիվ» շքանշանի ասպետ, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում: Զանգ, որ կարծես վերջ դրեց մանկության անհոգ օրերին ու ազդարարեց մեծ ճանապարհի սկիզբը: Ճանապարհ, որ տանում է դեպի նոր կյանք, որը լի է մաքառումներով ու մշտական փնտրտուքներով:

Պահի խորհուրդը մեկն էր. արժևորել անցյալը, հստակ գնահատել ներկան և անսխալ որոշում կայացնել ապագայի վերաբերյալ:

Հասունության շեմին նոր-նոր ոտք դնող տղաներն ողջ կյանքի համար արդեն կատարել են իրենց ընտրությունը, նրանք ընտրել են հայրենյաց պաշտպանի սուրբ մասնագիտությունը: Այս երեք տարիների ընթացքում նրանց մեջ ձևավորվել է պատասխանատվություն ու սեր հայրենիքի հանդեպ, իսկ սերը ժողովրդի ու ազգի նկատմամբ դարձել է սրբություն, հավատ և կյանքի ուղեկից:

Հայերի կյանքում այս արարողությունը խորհուրդ ունի: Չէ՞ որ հազարամյակներ ի վեր կրթության հանդեպ մեծ սեր ու ակնա-

ծանք տածող ազգը պատմության դժվարին ժամանակներում իր անցնելիք ուղին մշտա-



պես լուսավորել է դպրության հրով: Եվ հենց այսօր վերջին զանգի դողանքների ուղեկցությամբ բազմահազար շրջանավարտներ կմտնեն նոր կյանք: Բացման խոսքով հանդես եկավ վարժարանի պետի տեղակալ, մայր Զրայր Բաղդասարյանը: Ողջունելով սաներին ու հյուրերին՝ նա պատգամեց լինել ուշին, ջանասեր, անկտորում ուժի տեր, պատասխանատու ցանկացած գործում, և արժանի՝

հայրենիքի խիզախ պաշտպաններ կոչվելու պատվին:

Հուզիչ էր ու անակնկալ գորամասի հրամանատար, փոխգնդապետ Վահրան Գալստյանի չափածո խոսքը՝ ուղղված շրջանավարտներին.

Չէր ճանփին կան խաչներուկներ անսահման, խաչներուկներ մոլորումի, սայթաքման, Ընտրեք միայն դժվար ուղին վերելքի, Գիտցեք գինը ձեր հայրերի քրտինքի...

Սաներին շնորհավորանքի խոսք և պատգամներ հղեց ԼՂՀ կրթության նախարարության ներկայացուցիչ Վ.Գրիգորյանը՝ հիշեցնելով մայիս ամսում տարած հայ ժողովրդի հաղթանակները: Նա համոզված է, որ եթե նորից (Աստված մի արագեց) պատերազմ սկսվի, անպայման պիտի մայիսի 9-ով վերջանա:

Լավագույն ցանկություններ հնչեցին նաև վաշտի հրամանատարի, ծնողների և հենց շրջանավարտ սաների կողմից:

Խորապես համոզված լինելով վարժարանի սաների ստացած գիտելիքների և ֆիզիկական կոփվածության մեջ՝ ջերմ խոսքեր

հնչեցրեց դասղեկ Ալյոնա Գրիգորյանը: Նա ասաց սաներին, որ լինեն ունկնդիր դարերի ծայրին, հետնորդը լինեն մեր այն քաջերի, որոնք իրենց արյամբ օժեցին սուրբ հողը արցախյան, որոնք ընկան հանուն մեր այսօրվա և վաղվա կյանքի, ասել է թե՛ իրենց կյանքով՝ հանուն կյանքի:

Մեծ անակնկալ մատուցեցին 11-րդ դասարանիցները՝ ցուցադրելով դեֆիլե և ընդունելով էստաֆետը:

Անձնակազմի առաջին դասարան հաճախող զինծառայողների երեխաները հանդես եկան գրական-գեղարվեստական կոմպոզիցիայով:

Տարվա ընթացքում ձեռք բերած պատվոգրերի մի մասը վարժարանի պետի կողմից հանձնվեց Ա. Սողոմոնյանին, Գ. Աբալյանին և ուրիշ սաների:

Վերջին գանգը հնչեցնելու պատվին արժանացան 5 լավագույն սաներ և վարժարանի զինծառայողների 5 առաջին դասարանի երեխաներ:

Հնչեց ռազմամարզական կրթության վերջին զանգը, հնչեց՝ ապագայի հանդեպ լցված հույս ու հավատով:

Կարինե ՄՎՐՏՅԱՆ

ԲԱՆԱԿ-ԴՊՐՈՑ

ԶՈՐԱՍԱՈՒՄ

Մայիսի 28-ը մեր պատմության պայծառ օրերից է: 1918 թվականին, երբ հայ ժողովուրդը միավորվել էր, Սարգսյանի, Բաշինյանի, Ղարաբաղի հերոսամարտերից հետո հաղթեց թուրք թշնամուն և հռչակեց Հայաստանի Հանրապետությունը: 20 տարի առաջ էլ Արցախում դարձյալ միավորման շնորհիվ հաղթեցինք թուրք թշնամուն ու ազատագրեցինք մեր պատերի ոստանը: Հայոց ազատագրված Քաջաթաղում ու Կոմասկանում, Քաջունիքում ու Հաբանդում, Վայկունիքում ու Բերձորում նորից հայկական օջախներ ծխացին, հայը նորից տեր դարձավ իր հողին: Եվ ահա այստեղ իր տեղն ունի մշակույթը, որի ներկայացուցիչները մշտապես հայ զինվորի կողքին են:

Առաջին Հանրապետության 96-ամյակի առթիվ Քաջաթաղի շրջկենտրոն Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի պարի խմբակների սաները, «Բերձոր» ժողգործիքների համույթի երգիչներն ու երաժիշտները այցելեցին հանրապետության զորամասերից մեկը և մոտ երկու ժամ իրենց ելույթներով ուրախացրին ու ոգևորեցին մեր սահմանն անուր պահող զինվորներին: Մինչև համերգն սկսվելը անձրև էր տեղում, և այցելուները զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, փոխգնդապետ Արա Քամայանի ուղեկցությամբ ծանոթացան զորամասի պայմաններին, եղան զորանոցներում, ուսումնական սենյակներում: Փոխգնդապետը ներկայացրեց զորամասի անցած հերոսական ուղին: Դպրոցականներին բացատրեց զինվորի դերը հայրենիքի պաշտպանության գործում:

Զորանոցներից մեկում է Արցախյան ազատամարտի նվիրյալ մարտիրոս, լեյտենանտ Բենիամին Սուրենի Դանիելյանի անկյունը: 1992 թվականի հոկտեմբերին մարտական հանձնարարություն կատարելիս մարտիրոսվել է քաջորդին 40 տարեկան հասակում: Հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Նրա մահձակակալ այժմ էլ իր տեղում է, իսկ պատի վրա հերոսի մասին է գրված:

Զորանոցի միջանցքը դպրոց է հիշեցնում. պատերին պատի թերթեր են փակցված՝ «Մոռվ», «Մասիս», «Կայծակ». հիմնականում զինվորներն են նյութերի հեղինակները: Կա նաև հոգևոր անկյուն: Սա պատահական չէ.

մեր զինվորներից շատերը կամ ավարտել են բուհը, կամ ուսանողներ են: Զրուցում են նրանց հետ: Դիվիզիոնի ավագ վարորդ, շարքային Ալիկ Ղազարյանն արդեն կատարել է իր պարտքը հայրենիքի հանդեպ և այս օրերին զորացրվելու է: Ծննդավայրում՝ Շիրազ-լու գյուղում, սպասում են հարազատները: Գոհ է ծառայությունից. շատ բան է փոխվել իր կյանքում այս երկու տարիներին: Հատկապես տպավորվել են դիրքերում հսկելու գիշերները: Չարենց Ավետյանը Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղից է: Նա էլ շուտով տուն պետք է գնա: Ընկերներին կարոտելու է, բայց տանը հարազատներն են սպասում: Իսկ Վիրաբ Գրիգորյանը դեռ երկու տարի պետք է այստեղ մնա. եկել է Ալափարս գյուղից: Արդեն ընտելացել է բանակային կյանքին, ունի ընկերներ: Սհարոն Գրիգորյանը Քաջաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղից է: Ուսանում է Արցախի պետական համալսարանի իրավագիտության բաժնում, իսկ Հայկ Պապիկյանը Բերձորից է, դարձյալ ուսանող: Երկուսն էլ նոր էին հանձնել քննությունները և արդեն կատարյալ զինվորներ են, շուտով դիրքեր պետք է բարձրանան: Վերջապես կտրվում է անձրևը, և զինվորները վաշտ-վաշտ գալիս են ու շարվում հրապարակում: Սկսվում է համերգը: Հաղորդավար Արուսյակ Գալստյանը հայտարարում է, որ Քաջաթաղի շրջանից մի շարք տղաներ, ովքեր այսօր հայրենիքի զինվորներ են, նամակներ են գրել տունի առթիվ և իրենց զինակիցներին նվիրել երգեր. ընթերցում է նամակները: «Բերձոր» ժողգործիքների համույթը դիրքի մոտ Բալասանյանի ղեկավարությամբ հնչեցնում է «Տոնական»-ը: Հաջորդ արվեստի և սպորտի դպրոցի պարի խմբի սաներն են (պարուսույցներ՝ Վարուժան Գրիգորյան, Էլինար Հովհաննիսյան), որ ներկայացնում են ռազմական ու ազգագրական, ժամանակակից պարեր: Երգիչներ Գրետա Մովսիսյանը, Զարուհի Հակոբյանը, Նուբար Գեղամյանը, Գաբրիել Մուրադյանը, պարի խմբակների սաներն իրենց կատարումներով ավելի են բարձրացնում զինվորների

ոգևորությունը, և երաժիշտներին են միանում զինվորները: Համատեղ պարը ևս մեկ անգամ հուշում էր, որ միայն միասնությամբ և համախմբվելով մենք կարող ենք գոյատևել: Զինվորը պետք է հսկի այս մանուկների ու տարեցների անդորրը, իսկ բոլորս էլ պարտավոր ենք մշտապես լինել զինվորի կողքին, նրա հետ: Համերգի ընթացքում զինվորները վարդեր էին նվիրում պարուհիներին ու երգչուհիներին: Երգ ու երաժշտություն կատարեցին նաև զինվորները: Շարքային Օնիկ Մկրտչյանը, ով եկել է Մասիսի տարածաշրջանի Գեղանիստ գյուղից, վարպետորեն երգեց Զիվանու «Ձախորդ օրերը»: Նա էլ շու-

տապատրանի և ողջ շրջանի բնակչության անունից ողջունեց ու տոնի առթիվ շնորհավորեց աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը՝ կարևորելով մայիսյան հաղթանակների դերը հայոց պատմության մեջ: Այնուհետև զորամասի հրամանատարին նվիրեց Քաջաթաղի շրջանի՝ դարեր ի վեր հայկականը լինելու խորհրդանիշ հանդիսացող 4-րդ դարի Ծիծեռնավանքի լուսանկարը (հեղինակ՝ Զ. Ըռքոյան): Իսկ զորամասին նվիրվեց Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի նախկին սան, այժմ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանող Վարսենիկ Ըռքոյանի նկարած կտավներից: Զորամասի հրամանատար, գնդապետ Զ. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց այցի համար, ասաց, որ օրեր առաջ են շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի հետ որոշել այս հանդիպումը: Կարևորեց այն, որ նման ծրագրով ու գեղեցիկ ելույթներով համերգ առաջին անգամ է լինում զորամասում: Հավելեց, որ այս զինվորները մշտապես առաջին գծում են, և նրանց համար նման միջոցառումները ոգևորիչ են, հույս ու հավատ ներշնչող:

Բանակ-հասարակություն կապն անուր պահելու համար զորամասի պատվոգրով պարգևատրվեց շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը: Նույն պատվոգրին արժանացան շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժինը (վարիչ՝ Հարութ Ավանեսյան), «Բերձոր» ժողգործիքների համույթը (ղեկավար՝ Հասմիկ Գրիգորյան) և Բերձորի արվեստի և սպորտի դպրոցը (տնօրեն՝ Կարինե Մովսեսյան): Համերգից հետո զինվորների առջև ղեկավար Դավիթ Դավթյանը ճաշարան շարքով անցան բերձորից դպրոցականները՝ հավաստելով, որ շուտով իրենք են փոխարինելու ավագներին: Բոլորս զինվորների հետ ճաշակեցինք զինվորական համեղ կերակուրը: Մենք վերադարձանք տուն, իսկ զինվորների հերթափոխը բարձրացավ դիրքեր՝ հսկելու հայոց երկրի խաղաղությունը:

Զոհրաբ ՈՂՈՅՍԱՆ



տով տուն է գնալու: «Լավագույն զինվոր» կրծքանշանով կրտսեր սերժանտ Սասուն Ավոյանն ու շարքային Համազասպ Հովհաննիսյանը, ով նաև գերազանց ճշգրիտ է, Երևանից են: Նրանք հատկապես ակտիվ էին պարելիս: Ասացին, որ մինչև զորացրվելը դեռ կես տարի ունեն: Շուտով առաջին գիծ են բարձրանալու:

Ավարտվում է ծրագրված համերգը, սակայն «Բերձոր» համույթի երաժիշտներ Արամայիս Եսայանն ու Արթուր Մովսեսյանը նոր երգեր են հնչեցնում: Արթուրի Կարեն որդին նույնպես այս զորամասում է ծառայում: Զորամասի հրամանատարությանն ու զինվորների շրջվարչակազմի ղեկավար Սուրեն

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴՊՈՒՄԸ ԲԵՐԶՈՐՈՒՄ ԵՐ

Ընթացիկ տարվա մայիսի 4-ին կայացած հանդիպումը Պատարայի միջնակարգ դպրոցի և Քաջաթաղի շրջվարչակազմի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնիների միջև նախանշում էր, որ այն կրելու է շարունակական բնույթ:

Եվ փոխադարձ այցը չուշացավ: Մայիսի 18-ին՝ Քաջաթաղի ազատագրման օրը վաղ առավոտյան ավտոբուսն ուղևորվեց Քաջաթաղ:

Հյուրընկալ ու տոնակալ էր Բերձորը: Այդ տոնին մասնակից էր նաև մայր բնությունը: Ամբողջ քաղաքը պարուկված էր ակցիայի ծաղիկների արքեցնող բուրմունքով: Հիշում են Մեծարենցի տողերը՝

*Արբանյակներ՝ զինով լույսն ու տապե, Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան...*

Բնության շռայլ գեղեցկության զարդը տոնական տրամադրությամբ քաջաթաղցին է: Ակամայից վարակվում են, և հոգիդ լցվում է ցնծությամբ: Հրապարակը կամաց-կամաց լցվում է, և երթն ուղղվում է դեպի բարձունքին կառուցված հուշակոթող: Աստիճանները բարձրանում են դեպի բարձունքը, իսկ վերևում Հուշահամալիրն է՝ վեր խոյացող երեք այուններով, որոնց սրբատաշ քարերին փորագրված են Քաջաթաղի ազատագրման համար նահատակված քաջորդիների անունները: Աստիճանահարթակներին ցուցադրվում էին Քաջաթաղի արվեստի դպրոցի աշակերտների ձեռքի աշխատանքները, որտեղ նրանք իրենց մտքի թռիչքը և ձեռքի շնորհքն են դրել:

Օրը հագեցած էր: Հաջորդը ազգի նվիրյալ Վահան Զատիկյանի հիշատակին կառուցված հուշարձանի և պուրակի բացումն էր: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը, Հայաստանի Հանրապետության մարզերի ղեկավարներ, Վահան Զատիկյանի հարազատները: Ներկայացվեց հերոսի անցած ուղին, ծաղիկներ խոնարհեցին նրա կիսանդրու պատվամոդանին:

Աշակերտների պատրաստած միջոցառումը տպավորիչ էր, իսկ արվեստի սաների ազգային պարերը մի առանձին հմայք ու շունչ պարզեցին

ներկաներին:

Տոնակատարությունը շարունակվեց մինչև ուշ երեկո: Վեհափառի հրապարակում նախատեսված էր միջոցառում և համերգ: Ելույթ ունեցողները մեկ անգամ ևս կարևորեցին Քաջաթաղի ազատագրումը՝ մշելով, որ այն ոչ միայն միջանցք դարձավ Արցախի և Հայաստանի միջև, այլև սնուցող երակ՝ շրջափակման մեջ գտնվող արցախցիների համար:

Զուգահեռ հնչում էին հայրենասիրական երգեր, և մեր պատմական հողի վրա ուս ուսի պարում էին Քաջաթաղի տերերը՝ նոր սերունդը: Ոգևորիչ էր նրանց պարը, և հավաքվածներն ակամայից վարակվում էին, ու տոնակատարությունը վեր է ածվում համազգային տոնի:

*Եվ չի հաղթի ոչինչ այն քաջ ժողովրդին, Որ այս ջանքով Ու այս կամքով Պարել գիտի...*

Միջոցառումն ավարտվեց ուշ երեկոյան՝ հրավառությամբ: Բնություն, երկինք ու երկիր մասնակիցն էին այս մեծ տոնախմբության:

Ուսուցիչները մի խումբ աշակերտների հետ եղան Ծիծեռնավանքում: Նրանք մոտ վառեցին և աղոթեցին առ Աստված, որ Արցախում հաստատվի մշտական, կայուն խաղաղություն, ամուր լինի մեր զինվորի բազկի ուժը:

Վերադարձանք վառ տպավորություններով և մեծ ակնկալիքներով, որ նման միջոցառումները և հանդիպումները կլինեն շարունակական: Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանին և Քաջաթաղի շրջվարչակազմի ղեկավար Ժննդով պատարեցի Սուրեն Խաչատրյանին, որոնք նախաձեռնել և աջակցել են այս հանդիպմանը: Քանզի այսպիսի միջոցառումները հայրենասիրության յուրօրինակ դաս են:

**Ծովինար ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**  
**Պատարայի միջև. դպրոցի արտադասարանական-արտադպրոցական աշխատանքների կազմակերպիչ**

ՀՐԱԺԵՑ ԲՈՒԵԶԻՆ

Մայիսի 27-ին վերջին զանգի դողանքները հնչեցին նաև Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում: Այդ օրը երեք բաժնիների՝ «Թարգմանություն և գործավարություն» (կուրսղեկ՝ Լիլա Բալասանյան), «Ջարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» (կուրսղեկ՝ Գայանե Մինասյան) և «Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում» (կուրսղեկ՝ Գևորգ Թաիրյան) ավարտական կուրսերի ուսանողները հրաժեշտ տվեցին իրենց հարազատ դարձած կրթօջախին:



Միջոցառմանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ, ծնողներ, հյուրեր և Շուշիի քաղաքապետ Արծվիկ Սարգսյանը: Այն սկսվեց Արցախի օրհներգով: Ուսանողները մի խորին ու հպարտ ակնածանքով բարձրացրին ՀՀ և ԼՂՀ դրոշները, որոնց թևերով դեպի գալիք պիտի թևի իր գոյատևման իրավունքը սեփական արյամբ ձեռք բերած մեր

հաղթական ժողովուրդը: Այնուհետև հնչեցին երգը, պարը, ասմունքը: Ուսանողների շուրթերից հնչեցին երախտագիտության խոսքեր՝ ուղղված իրենց սիրելի դասախոսներին:

Ուսանողներին շնորհավորելու էին եկել Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցի նախադպրոցական խմբի փոքրիկները (դասավար՝ Նարինե Գրիգորյան): Նրանք իրենց գեղեցիկ երգով, պարով ու բանաստեղծությամբ էլ ավելի գեղեցկացրին ու ջերմացրին տոնական մթնոլորտը:

Միջոցառման վերջում բոլորը հուզվել էին, բայց անհամեմատ ավելի մեծ էր ուսանողների հուզմունքը: Նրանցից շատերն այդ պահին ավելի խորն էին զգում քոլեջի քաղցրությունը: Հետո չէ մեկ զանգով անցյալում թողնել այդ չորս տարիների ուսանողական կյանքը... Բայց առջևում նրանց սպասում է ակնկալիքներով և երազներով լի մի ամբողջ կյանք:

Շնորհավոր վերջին զանգ, սիրելի՛ շրջանավարտ: Թող երթո՛ւ լինի անխաթար, միտքո՛ւ՛ նպատակասլաց ու պրպտուն, իսկ ամեն մի ձեռնարկումդ միայն հաջողություն բերի քեզ:

Նարինե ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի «Թարգմանություն և գործավարություն» բաժնի շրջանավարտ



ՈԱՏԱՆԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՍՏԻԱՐԱԿՎՈՒՄ Ե ԱՐԺԱՆԻ ՇԵՐՁԱՓՈՒՄ

Մերօրյա երիտասարդ սերնդի համար հայրենասպառնական դաստիարակությունն է փրկության օղակն ու խարիսխը: Մատաղ սերունդը պիտի գիտակցի, որ կարևորը ոչ միայն կյանքը գոհաբերելն է հանուն հայրենիքի, այլև ապրելը հանուն հայրենիքի, ձեռք բերած հաղթանակի պտուղները վայելելը, մեր ջրնաղազեղ երկրամասը շենացնելն ու ծաղկուն դարձնելը:

Եռատուն: Ինը մայիսի...

Այս խոսքերի մեջ միանգամից ամփոփված են մեր ժողովրդի անցյալը, ներկան ու ապագան: Ուսանելի են եռատունի դասերը նոր սերնդի համար, քանի որ գալիք սերնդին է վիճակված բազմապատկելու մեր ձեռք բերած բազուն հաղթանակները: Ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ոչ պատերազմ, ոչ խաղաղություն է, շարունակում ենք ապրել ազատամարտիկների հիշատակի նշխարներով ու ապրողների ամենա հիշողություններով՝ համոզված, որ սերունդները միշտ վառ կպահեն ազատության ոգու ջահը:

Երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր բաղադրիչն է բանակ-դպրոց կապի ամրապնդումը, Պաշտպանության բանակի հետ համագործակցության խորացման, արժանի հերթափոխ դաստիարակելու նպատակով ծրագրերի իրականացումը: Այդ ծրագրերի շրջանակներում Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցում մշակվել է Մայիսյան եռատունի առթիվ միջոցառումների և հանդիպումների ժամանակացույց, ըստ որի՝ այն իրականացվել է: Դպրոցականների շրջանում հայտարարվել է ծանրոցների պատրաստում՝ «Նվեր ավագ եղբորս» խորագրով: Ակտիվ եռուգեռ էր սկսվել դպրոցում: Պատրաստվեցին խմբային թվով քսանչորս ծանրոցներ, և դպրոցի մի խումբ ուսուցիչներ, զինղեկ Արմեն Դուրյանյանի գլխավորությամբ, ծանրոցները հասցրին դպրոցի շեֆ գործառնասի՝ Իրեմանյան բրիգադի զինվորներին, որոնք գտնվում էին ճամբարային հավաքներում և 4-րդ ՊՇ դիրքապահ ջոկատների զինվորներին: Յուրաքանչյուր խմբի կողմից պատրաստված ծանրոցի մեջ քաղցրավենիքից և առաջին անհրաժեշտության պարա-զաններից բացի կային յուրովի բովանդակությամբ նամակներ և շնորհավորական բացիկներ՝ զինվորներին ավելի ոգևորելու համար: Ջինվորների պատասխան շնորհակա-

կան ուղերձուն ասված է. «Սիրելի՛ ուսուցիչներ և ա-շակերտներ, այսօր մեզ համար շատ կարևոր է, որ ամրապնդվում է բանակ-դպրոց կապը, քանզի դուք եք, սիրելի աշակերտներ, մեր հայրենիքի ապագա զինվորները, մեր հերթափոխը: Մեր աշակերտներ, դուք ձեր արարքներով, գեղեցիկ ու բարոյական քայլերով զինվորի կյանքն ու ծառայությունը դարձնում եք ավելի ուրախ ու հետաքրքիր: Մենք՝ զինվորներու, անչափ զգացված ենք Մայիսյան եռատունի առթիվ մեզ ուղարկած շնորհավորանքների և նվերների համար, ինչի համար շնորհակալ ենք ձեզ կրթող ու դաստիարակողներին՝ ուսուցիչներին ու ծնողներին»:

Նամակներում արտահայտված է այն միտքը, որ առաջին գծում կանգնած զինվորը գիտի, որ հսկում է իր հարազատների, ծնողների և ընկերների հանգիստը: Ու թե հանկարծ թշնամին փորձի խանգարել մեր ժողովրդի ամրորը՝ ուղքի կելնեն քաջ Վարդանի, Ավոյի ու Արմենի պես...

Միջոցառումների երթը շարունակվեց շարադրությունների ու ասմունքի մրցույթներով, այցելություններով ու հանդիպումներով: Այսպես են գրում դպրոցականները շարադրություններում. «Իմ Արցախ, երջանիկ է նա, ով քեզ կարող է կոչել Մայր: Եվ ընտրյալ է նա, ով քեզ կարող է կոչել հայրենիք: Ու երանի նրան, ով ունի հայ զինվորի նման հուսալի պաշտպան:

Հայրենիքը սրտում, դյուցազնապատումի սրբազան էջերը հոգում՝ անհատականություն է հայ զինվորը: Հայ մամիկի ամենօրյա աղոթքների խտացումն ու Հայի Նահապետի հպարտությունն է նա, Նժդեհի գաղափարակիրն ու Մոնթի հետևորդը: Նա չի կռվում սպանվելու համար, այլ՝ ի հեճուկս դարավոր ու արյունոտ ռոտիսի, ապրելու: Յուրաքանչյուր զինվոր Արմեն Հովհաննիսյան է, անձնվեր քաջամարտիկ: Ու մեր փառապանծ բանակն այդպիսի արծիվների բույն է: Այն մեր տունն է, մեր անառիկ բերդ-ամրոցը» (Լուսինե Մարտիրոսյան 12 հ. 1 դաս.):

«Համոզված եմ, որ բոլոր ժամանակների հայ զինվորները ձգտել են ամենաբաղձալիին՝ խաղաղության: Հայ զինվորը ոչ միայն երկաթաբալետ վառն է եղել ու պարիսպ, այլև հատու սուր, որը պատժել է չարին և արժակերպ իր դրոշմ պանծացրել հանուն ազատության» (Գևորգ Մուսայելյան, 11 բն. 1 դաս.): Եվս մի հատված՝ «Իմ հայրց բանակ, իմ

բերդ ու ամրոց, իմ պաշտպան, իմ փրկություն, իմ ապավեն, այսօր ես՝ քո անցած ուղին մեքս կերտած պարմանուհիս, պատրաստ եմ կանգնելու քո զինվորի հետ՝ հանուն մեր հայրենիքի հավերժության...» (Մարիաննա Բաղունց, 11 հուն.՝ դաս.)

Դպրոցի հունամիտար հոսքի 10-րդ՝ դասարանի 31 աշակերտներ դասղեկ Ս. Գասպարյանի և ծնողխորհրդի նախագահ Մ. Ղազարյանի հետ այցելեցին ԱԱՄ վետերաններին: Հանդիպումը շատ սրտառու էր, երբ միության շենքի դիմաց սովորողներին դիմավորեցին ազատամարտիկները և դպրոցականներին ուղեկցեցին նորակառույց այդ հավաքատեղի-օջախը, որտեղ անթելված են նրանցից յուրաքանչյուրի անցած մարտական ուղին, դժվար դեպքերի և ուրախ պահերի հուշերը: Դպրոցականները տեսան ապակե պատերով հուշարձանը՝ հերոսացած քաղաղների անուններով, լուսավորված պայծառ լույսերով...

Արցախի ազատամարտիկների միության խորհրդակցությունների դահլիճում կլոր սեղանի շուրջ հարցազրույց ծավալվեց ազատամարտիկներ Ավարո Շեկյանի, Արթուր Առաքելյանի, Արթուր Սարգսյանի, Ռոբերտ Եսայանի, Գագիկ Ավանեսյանի հետ: Ազատամարտիկներին ներկայացրին այցի նպատակը, որը շատ ողջունելի էր: Ծավալվեց ջերմ ու անկաշկանդ զրույց երկու սերունդների ներկայացուցիչների միջև: Աշակերտներին հետաքրքրում էր, թե ազատամարտիկներն ինչպես քաղաքացիական կյանքից միանգամից անցան զինվորականի կյանքին ու ինչպես հաղթահարեցին պատերազմի արհավիրքը:

Դպրոցականները ևս պատասխանեցին ավագ սերնդի ներկայացուցիչների կողմից առաջարկված հարցերին՝ նրանց վստահեցնելով, որ կլինեն այդ փրկված հողի արժանի ժառանգորդները, կլինեն հայրենասեր իրենց հայրերի, պապերի ու եղբայրների պես, ինչի համար նրանք գիտակցում են ուսման գործի կարևորությունը:

Հանդիպումը եզրափակվեց ազատամարտիկների ու աշակերտների համատեղ երգերով ու ասմունքով, շնորհավորանքներով ու բարենաղթանքներով, հուշանվերների ու գրքերի փոխանակմամբ, համատեղ լուսանկարով:

Դպրոցականները կարողացան գնահա-

տել ազատամարտիկ-վետերանների կատարածն ու ընդունել նրանց դաստիարակչական խոսքը:

Շատ ջերմ ու սրտառու էր, և խոստացան, որ այն շարունակական բնույթ կկրի:

ԼՂՀ ԿԳՆ և ՊՆ միջև գործող համատեղ ծրագրերի համաձայն, ազատամարտիկների կողմից դպրոցի բոլոր դասարաններում անցկացվեցին արիության դասեր՝ հետաքրքիր դրվագներով ու դեպքերի նկարագրով: Հերոսական քաջարի գործողություններով ներկայացված փաստերի շնորհիվ նրանք քաջալերեցին մատաղ սերնդին: Դպրոցականներն էլ իրենց ելույթներով ու շնորհավորանքի խոսքերով վստահեցրին վետերաններին՝ հույսերն արդարացնել և ժառանգած հաղթանակն ու ազատագրած հայրենիքը պաշտել ու պահպանել՝ չնռանալով մարտիրոսված քաջերի ու ապրողաց սխրանքները:

Դպրոցականները, ի նշան խոր ակնածանքի ու երախտագիտության, ծաղիկներ դրեցին նահատակ ուսուցիչ Վիտալի Ջհանգիրյանի, դպրոցի նահատակ շրջանավարտների գերեզմաններին, անհայտ կորած ազատամարտիկների, մեր փրկության ազատամարտում նահատակվածների հուշարձաններին:

Միջոցառումների շարքը հայրենիքի ու նրա պաշտպանի հանդեպ սիրո ու պարտավորվածության, հայ զինվորի ու Հայոց բանակի նկատմամբ հավատի ու վստահության ներշնչման առանձնահատուկ դաստիարակչական նպատակ էր հետապնդում: Թող բազմապատկվի մեր բանակի ուժը և վերջնական հաղթանակ բերի բոլորիս...

Լուսավոր ժամանակներ են: Այսօր արյամբ գծված մեր սահմաններին կանգնել է հայոց պաշտպանը՝ իր արծվեմի հայացքը հառած պայծառ ապագային: Դաստիարակվում է արժանի հերթափոխ, հնչում է շինարարի մուրճի զնգոցը, բանաստեղծի գրիչն արարում է երգ ու սեր, իսկ նկարչի վրձինը հրաշք գարուններ է պատկերում:

Թող հայոց աշխարհի հաղթական գալուցները գան ու չզնան:

**Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**«Սպեկ. Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց»**  
**ՊՈԱԿ-Ի ՄՎԱԳՏՏ**

Շնորհավորանք

ՀՆՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ԱՌԱՐԿԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿ



Կան մարդիկ, որոնց մասնագիտությունը ասես տրվում է վերուստ: Նման երջանիկներից է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Վերա Խաչատրյանը՝ տաղանդավոր ուսուցիչ, հմուտ մանկավարժ, ռուսաց լեզվի մեծ գիտակ: Ծնվել է 1954թ., Ալթայի երկրամասի Բիսկ քաղաքում: 1971թ. ավարտել է Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ դպրոցը: 1976-ին՝ Երևանի Բոլոսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը: Ազգությամբ ռուս մայրը՝ Ալեքսանդրա Գանինան, Գերասիմ Խաչատրյանի հետ կազմել է ազգային ավանդույթները սիրող ու հարգող մի գեղեցիկ հայկական ընտանիք:

Ռուսախոս հայուհի Վերա Խաչատրյանը ապրում է հայավարի ու երեխաներին դաստիարակում հայկական ոգով: Կյանքի դառնությունները ճաշակած այդ կինը ունի անսպառ էներգիա, հարուստ բառապաշար, խոսքի կուլտուրա, կենսասիրություն, վառ երևակայություն, ստեղծագործելու տաղանդ:

Նրա յուրաքանչյուր դաս լի է անակնկալներով: Այնպես է մատուցում Պուշկին, Լերմոնտով, Եսենին, որ թվում է, թե ճանաչել է նրանց, ապրել տվյալ ժամանակաշրջանում, տառապել և ուրախացել նրանց հետ: Դասերին նա սիրում է ծավալվել, լողալ թեմայի մեջ: Մեծ ուշադրություն է դարձնում խոսքի պատկերավորությանը, դիտողական պարզազաններին, թատերականացված սյուժեներ ստեղծելուն և այլն:

Իսկ թե ինչպես և ինչ մակարդակով է կազմակերպում «Ռուսաց լեզվի օրերը դպրոցում», ինքը միայն կարող է ասել:

Դպրոցի կյանքով ապրող, իր կյանքն առանց դպրոցական զանգի չպատկերացնող ուսուցիչը հաճախակի բաց դասղեկական դասեր է կազմակերպում «Հացը սուրբ է», «Ջուրը կյանք է», «Ընկերությունը փողով չես գնի», «Գեղեցկությունը կիրկի աշխարհը»,

«Ջոկված ազատամարտիկը մեզ հետ է» և այլ թեմաներով:

Այսքանով հանդերձ, նա վարում է ակտիվ հասարակական կյանք, ղեկավարում է ռուսաց լեզվի քաղաքային մեթոդիավորումը:

Բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով ու գովասանագրերով: 2007թ. ստացել է «Տարվա լավագույն մանկավարժ» մրցանակ:

ԼՂՀ կառավարությունը բարձր է գնահատել մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում նրա ավանդը և 2008թ. արժանացրել վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչման:

Անփոխարինելի դուստր է, հոգատար մայր, երջանիկ տատիկ:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի կողեկտիվը հպարտանում է տաղանդավոր գործընկերոջով և ի սրտե շնորհավորում է նրա ծննդյան 60-ամյակը, մաղթում քաջառողջություն, երկար տարիների երջանիկ կյանք, բեղմնավոր աշխատանք և նորանոր հաջողություններ կյանքում և աշխատանքում:

**Ստեփ. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

ՈՒՍՈՒՅԻ՞ ԼՈՒՍԵ ԱՆՈՒՆ



Ավելի քան 40 տարի... Քայլել է գիտության, կրթության և լուսի ճանապարհով: Քայլել է ոչ սուկ որպես ճամփորդ, այլ սերմնացանի արդար վաստակով իր հոգու հունդերն է պահ տվել մատաղ սերնդին, նվիրվել, տրվել ամբողջովին, նրա համար բացել լուսի ու կյանքի ճանապարհ... Ավետլանա Հակոբյանը ծնվել է 1954թ. հունիս 1-ին, Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի տարրական կրթություն և մեթոդիկա բաժինը: 1974թ. աշխատանքի է անցել Քերթի միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար, այնուհետև՝ տարրական դասարանների դասավար: Ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ բոցավառված՝ նա նվիրվեց

գյուղի դպրոցին՝ Գոյամարտի տարիներին լինելով նրա տնօրենը: Նրա շնորհիվ ոչ մի օր չփակվեց գյուղի դպրոցը:

Ավետլանա Հակոբյան ուսուցիչ-մարդուն կյանքում ուղեկցել են մի շարք հատկանիշներ՝ անսահման սեր ընտրած մասնագիտության հանդեպ, սկզբունքայնություն, հետևողականություն, նվիրվածություն, պատասխանատվություն ու բարյացակամություն:

Ուսուցչուհին ժամանակի ընթացքում ճանաչում է գտել իր իմացությանը ոչ միայն դպրոցում, այլ նաև հասարակության մեջ: Մերված է շրջապատին, սիրված ու հարգված՝ բոլորի կողմից:

Ավետլանա Հակոբյանը հպարտ անձնավորություն է: Նրա հպարտությունը բնական է: Նրա հետ կողք կողքի աշխատում են նրա առաջին աշակերտները, իր աշակերտների երեխաները, որոնց առաջին ուսուցիչն է նաև:

Ս. Հակոբյանը երեք երեխաների մայր է, որոնք մեր հայրենիքի արժանավոր գավակներն են:

Շնորհավոր 60-ամյա հոբելյանը, մեր սիրելի ուսուցչուհի:

Ամբողջ մանկավարժական կոլեկտիվով ցանկանում ենք քեզ արևշատություն, անափ անջանկություն, աստղաբույլ հաջողություններ...

**Մարտունու շրջ. Քերթի կոմիտասա Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ**

ԱՆՊՐԱՂԱՐԶ

ԱՊՐԲԵՋԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՆՈՒՆԴ, ԹԵ՛ ԿԵՐԱԵՆՈՒՆԴ

Աշխարհաքաղաքական հարափոփոխության պայմաններում գտնվող Հարավային Կովկասը բոլոր ժամանակներում եղել է երկբևեռ աշխարհի քաղաքական և տարածքային շահերի սպասարկուն: Նախորդ դարի վերջին տասնամյակից ի վեր այս տարածաշրջանում մեծ տերությունների քաղաքական կրքերը հաճախ են բորբոքվում՝ հարուցելով բնիկ ժողովուրդների ինքնության պահպանման իրական վտանգ: Այս պարագայում նպատակային անհրաժեշտություն էր համարվում մեծ մարտահրավերներին դիմակայելու խնդիր լուծել 2011թ. Ադրբեջանի նախագահ կրտսեր Ալիևի անմիջական հովանավորությամբ մայրաքաղաք Բաքվում հրավիրված «Թուրքիա-Ադրբեջան. քաղաքակրթության օրրան» խորագրով գիտաժողովը: Իրենց «ժննդաբանությունը» մինչև դարերի խորքը հասցնող ազգերի պատմաբան-քաղաքագետների առջև ծառայած էր մի կարևոր խնդիր. ապացուցել աշխարհին, որ թուրք-ազգերի ազգը երկրագնդի վրա բնակություն հաստատած հնագույն ժողովուրդների՝ շումերների, մարերի, Մեծ Հայքի պատմության ժառանգորդներն են, իրանական Ատրոպատանիայի օրինական տերերը: Վերստին շրջանառության մեջ դրվեց ազգերի պատմահեղձների «հին օրերի երգը».

Իբր դարեր շարունակ պատմության անիվը թուրք-ազգերի էքսոսի շնորհիվ է պտտվել, իսկ զորի կարգավիճակում հայտնված նույնամուն ժողովուրդը բնաջնջվել է Անատոլիական բարձրավանդակում հաստատված ժողովուրդների կողմից՝ ուժացման կամ տեղահանման ճանապարհով: Հարկ է նշել, որ ոչնչից պատմություն հորինող, հայտնի պատմագող Ջիա Բունիաթովը նմանատիպ գառնացանքի համար դեռ նախորդ դարի 70-ականների կեսերին հայր Ալիևի կողմից պարզևատրվել է լեհիսյան աշխատանքի պատվավոր շքանշանով:

Ադրբեջանցի պատմագրողի գրոհը կրկին ուղղվեց դեպի հայկականն ու իրանականը: Մինչև հայերս մեծահոգաբար լուծ ենք, ադրբեջանցի քոչվորներն էլ ավելի են գարկ տալիս սեփական երևակայությանը: Նրանց բարբառանքները հասնում են աներևակայելի աստիճանի, ու կրկին քաղաքական հարթակի վրա է դրվում ազգերի մեծ ինքնահնագույն ազգ լինելու մասին միջը, ինչը կասկածի տակ է առնում տարածաշրջանի ժողովուրդների ծագումնաբանական ողջ ընթացքն ու պատմական գոյակցությունը: Այսպես. պարզվում է, որ ներկայիս Հայաստանը, որը քարտեզի վրա նշվում է Հայաստանի Հանրապետություն, բնիկ ադրբեջանական հող է, Լեռնային Ղարաբաղը ազգերի պատմական հող է, Երևանի խանությունը, Ջանգեզուրի մահալը իսկական ադրբեջանական են, որտեղ ժամանակին ապրում էին նրանց, այսպես կոչված, նախնիները: Որ նրանց հնագույն բնօրրանի մասն է կազմում Աղվանքը, որ հայ ժողովրդի պատմության անփոփ վկայագիր Մովսես Խորենացին ոչ թե հայ, այլ աղվանացի է, իսկ աշուղական երգիչ Սայաթ-Նովան, միջնադարյան բանաստեղծ Նիզամի՝ ադրբեջանցիներ: Ազգերի գիտնականների հիվանդ երևակայությունը հասել է այնտեղ, որ նույնիսկ Արցախի միջնադարյան քրիստոնեական եկեղեցիները՝ Ամարասը, Գանձասարը հայտարարվել են ադրբեջանական, իսկ աղվան-ադրբեջանցիները՝ աշխարհի ամենաբարեպաշտ մահմեդականներ: Խեղաթուրելով պատմությունը՝ նույնպիսի մոլագարությամբ ադրբեջանցի վայ-պատմաբանները համաշխարհային հանրությանը սիրահոժար իրենց «սեփականությունն» են ներկայացնում իրանական Արդաբիլը, Ուրմիան, Մարաղան, իսկ Թավրիզը ոչ ավել, ոչ պակաս հայտարարում համաադրբեջանական «մեծ մայրաքաղաք»: Այսպիսով. «Մեծ Ադրբեջան» հորջորջվող այդ թվացյալ պետության սահ-

մանների մեջ ադրբեջանցի պատմագրողները ներառել են Իրանի ինը նահանգ, Պարսկահայքը՝ Ուրմիա լճով, արևմուտքից՝ Հայաստանի գրեթե ողջ տարածքը, հյուսիս-արևմտյան կողմից՝ Վրաստանի արևելյան և հյուսիսից՝ Դաղստանի հարավային հատվածները (А.Гулиев. “История Азербайджана”): Իսկական զավեշտ: Միայն պատմությունից անտեղյակ, գլուխ չհանող մարդը կարող է տարվել այդպիսի ստահող առեղծվածաշունչ պատմություններով, որոնք անընդհատ լրամշակման են ենթարկվում պատվերով գործող պատմաբանների կողմից:

Այս համատեքստում անհրաժեշտություն են համարում հավատարիմ ընթերցողի դատին հանձնելու մեր «դարավոր հարևանի» տեղանվան ծագման, իբրև ժողովուրդ ազգային ինքնության մասին որոշ պարզաբանումներ և մտորումներ (հատկապես որ առիթը կա):

Ազգերաբանական տեղանունը կազմված է պարսկերեն *ազեր` կրակ* և *բայջան` երկիր* բառերի միացումից: Ենթադրվում է, որ անվանումը կապված է գետնի տակից դուրս եկող գազերի այրման երևույթի հետ (այդ գազերի այրման վայրերում հնագույն ժամանակներում ստեղծվել են կրակապաշտարան-ատրուշաններ): Երկրի հայերեն անվան հիմքում ընկած է պարսկերեն *արդուր* բառը, որը նույնպես նշանակում է կրակ (հայերենի տղման օրենքով բարդության սկզբում դարձել է *արդ*): Երկրի հարավային մասը հին հունական աղբյուրներում կոչվում է *Ատրոպատեն*, հայկականում՝ *Ատրպատական*: Այդպես է կոչվել Փոքր Մարաստանում Աբեմենյանների սատրապ Ատրոպատեսի անունով, ով Ք.ա. 321թ. Փոքր Մարաստանը հռչակել է անկախ թագավորություն և դարձել հարստության հիմնադիր թագավորը (Վահան Բայբուրդյան, «Իրանի պատմություն»): Փաստն այն է, որ ադրբեջանցի ժողովուրդը Կովկասյան նախալեռներից հարավ ընկած տարածքում մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը հայտնի էր *թուրքեր* կամ *Կովկասի թաթարներ* անունով: Նույնիսկ 1929թ. Թիֆլիսում տպագրված վիճակագրական տեղեկատուում բացակայում է «ադրբեջանցի» էթնոնիմը: Թյուրք անվանումը պահպանվեց մինչև 1936-37թթ.: Իսկ 1930-ական թթ. վերջին խՍՀՄ-Թուրքիա միջազգային հարաբերությունների լարվածության պայմաններում խորհրդային երկրում ադրբեջանցիների թյուրք կոչվելը դառնում էր անցանկալի երևույթ, և ժողովուրդների առաջնորդ Ստալինի վճռով Կովկասի թուրք-թաթարների համար մտածվեց նոր տարբերվող անուն: Այդպես երեսունականների վերջից իր ծննդի մասին աշխարհին հայտարարեց երկրագնդի ամենաերիտասարդ ժողովուրդը՝ ադրբեջանցին: Իսկ մինչև այդ նշենք, որ 1918թ. մայիսի 27-ին Այսրկովկասում ձևավորված նորաթուխ Ադրբեջան պետության ապօրինի ծնունդը (անիմաստ է ավելի վաղ շրջանին անդրադառնալ այն պարզ տրամաբանությամբ, որ դրանից առաջ ադրբեջանցիները պետականություն չունեին) պատահական չէր: Նման կազմավորման ստեղծման մեջ խիստ շահագրգռված էր Թուրքիան, նաև՝ Անգլիան ու Գերմանիան: Սակայն փաստն այն է, որ ադրբեջանական պետության ստեղծողն ու պահողը Թուրքիան է, ուստի և, ցայսօր շարունակվում է ջանադարձար ամուր հենարան մնալ իր իսկ ստեղծած պետական միավորի թիկունքին: Արիեստածին պետական միավորի ի հայտ գալը հուշում է նախորդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի տարածաշրջանային հեռահար ծրագրերի, հստակ նպատակների մասին.

1. կամուրջ ստեղծել Թուրքիայի, բուլղարիայի և Ռուսաստանի և Միջին Ասիայի իրենց հավատակից թուրքալեզու աշխարհի հետ (հիշենք համաթուրանականությունը),
2. ոչնչացնել այդ կամուրջի խոչընդոտող

արևելահայությանը, Այսրկովկասում ապաստանած արևմտահայ բեկորներին՝ յուրովի լուծելով հայկական հարցը.

3. տիրել Բաքվի հարուստ նավթահանքերին և պատերազմական դաշնակից Գերմանիային ապահովել նավթով.

4. վերջնականապես Հարավային Կովկասը կտրել Ռուսաստանից, այն մասնատելով մաս-մաս նվաճել:

Այդ է ճշմարտությունը: Ի դեպ, հայտնի է, որ իր հռչակման օրից մոտ չորս ամիս անց միայն, թուրքական բանակի Բաքու մտնելուց երեք օր հետո նորահայտ պետության ղեկավար Ֆաթալի Խան Խոյսկու կառավարությունը Ելիզավետպոլից (Գյանջա) ժամանեց Բաքու՝ հայտարարելով այն նորընծա հանրապետության մայրաքաղաք: Իրավացի է Ղարաբաղի հիմնահարցի գիտակ, պրոֆեսոր Ա. Մանասյանը. «Ադրբեջանի հանրապետությունը թուրքական նոր պետություն ստեղծելու առաջին նախակիրառյալ փորձն է ինտերվենցիայի ճանապարհով ոչ թուրք ժողովուրդների արտաքսման, բնաջնջման»: (Манасян А. С., “Карабахский конфликт, Международно признанные основания проблемы”):

Պատահական չէր ընտրված նաև նորահռչակ պետականության անվանումը: «Ադրբեջան-Ազերբայջանը» Իրան-Պարսկաստանի հյուսիսային ընդարձակ, թուրքերով բնակեցված, աշխարհագրական «Ատրոպատեն-Ատրպատական» նահանգի արաբական անվանումն է, որի հյուսիսային սահմանը Արաքս գետն է: Նորահայտ պետական կազմավորման կնքահայրը եղել է երիտթուրքական ուժակը, որի հեռահար նպատակն էր հետագայում արհեստածին այդ երկրին Իրանի տարածքում գտնվող իրանական Ադրբեջանի միացումը: Դա էր պատճառը, որ Պարսկաստանը երկար ժամանակ չի ցանկացել ճանաչել Ադրբեջանական հանրապետությունը և հարաբերություններ չի ունեցել նրա հետ: Նույնիսկ այսօր էլ, ինչպես հայտնի է, Թուրքիան չի հրաժարվել իր նկրտումներից և Ադրբեջանի միջոցով Իրանի նկատմամբ դրսևորում է տարածքային հավակնություններ: Իսկ Իրանի ղեկավար շրջանակները առիթը բաց չեն թողնում հայտարարելու Իրան-Հայաստան միջպետական կապերի ամրապնդման, դարաբաղյան հիմնահարցը ազգերի ինքնորոշման իրավունքի ճանապարհով լուծելու մասին (պատմական նմանատիպ խաղերը մեզ անծանոթ չեն, պարզապես ամուր նյարդեր են անհրաժեշտ ժամանակի տարածականում ճիշտ կողմնորոշվելու, առձևատմանը դիմագրավելու):

Ուսումնասիրվող թեմայի շրջանակում նպատակահարմար են գտնում մեջբերել Ռուսաստանի հարավում՝ Դոնի շրջանում ռուսական կամավորական բանակի ցարական գեներալ Անտոն Դենիկինի անձնական վերաբերմունքը Ադրբեջան պետության ստեղծման վերաբերյալ: Հետաքրքրականն այն է, որ ցարական բանակի գեներալը երբևէ ռազմավարական դիրք գրավող և էներգիկորեն իրարուստ Ադրբեջանը անկախ պետություն չի ճանաչել և համարում էր ապագա միասնական Ռուսաստանի անօտարելի մաս: «Ադրբեջանական հանրապետությունում ամեն ինչ արհեստական էր. «ոչ իսկական», սկսած անվանումից, որը վերջված էր պարսկական նահանգներից մեկից: Արիեստական տարածք, որն ընդգրկում էր լեզգիական Ջաբաթալան, հայ-թաթարական Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները, ռուսական Մուղանը, որը թուրքական քաղաքականության կողմից միավորվել էր որպես Կովկասում համաթուրքականության և համամահմեդականության հենակետ... Արիեստական պետականություն, քանի որ ժողովուրդների մեծ վերաբնակեցման ճանապարհին ընկած այդ հողերում միշտ բնակվում էին միմյանց հաջորդող նվաճողների բազմա-

զան մշակույթների ներգործությանը ենթարկված մանր ցեղեր: Վերջապես արիեստական էր պահվում նաև ադրբեջանական կառավարությունը՝ սկզբնապես Նուրի փաշայի կամքով, այնուհետև՝ գեներալ Թոմսոնի (Բաքվում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-նահանգապետ), հետագայում ուղղակի ինքեցիայով» (А. Деникин. “Очерки русской смуты”): Գաղտնիք չէ, որ ադրբեջանական իշխող վերնախավը տեղյակ էր Դենիկինի հեռազնա նպատակներին՝ զավթել Այսրկովկասը, հաշվեհարդար լինել նրանց հակադեմոկրատիային վարչակարգերի հետ: Արդյունքում ստեղծվելով հարավի կառավարություն՝ երկրամասը դարձնել իր ֆորպոստը՝ Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական ծրագրերի իրագործման համար: Ավելին. ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչությունն իրագրված էր ՀԿԲ-ի շարքերում դարաբաղցիների ներկայության, Հարավի կառավարության և Հայաստանի իշխանությունների սերտ համագործակցության, գաղտնի դաշինքի առկայության, Հայաստանի հովանավորությամբ «փոքրիկ Ղարաբաղին» ինքնիշխանության կարգավիճակ տալու մտադրության մասին: Այս համատեքստում 1920թ. վրաց-ադրբեջանական ղեկավարության կողմից մշակվեց ՀՀ իշխանությունների հետ համատեղ կոնֆեդերացիա ստեղծելու նպատակով: Առաջարկը խիստ մերժվեց Հայաստանի գործող իշխանության կողմից, ինչը ավելի սրեց եռակողմ միջպետական հարաբերությունները (Հայաստանը թանկ վճարեց դրա համար): Նույն աղբյուրը վկայախոսում է գեներալ Դենիկինի հայտնի հրամանի մասին. «Հաշվի առնելով ռուսական բանակի, գործող իրամանատարության հանդեպ ադրբեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքը և պատմական Հայաստանի հողերի վրա ադրբեջանական զորքերի դավադրական հարձակումները՝ հրամայում են ադրբեջանական զորքերում գտնվող ռուսական ծառայության բոլոր սպաներին լքել նրանց շարքերը, իսկ ադրբեջանական իշխանություններին՝ պատրաստել հաշվետվություն կատարվածի վերաբերյալ»: Վերոնշվածից կարող ենք միայն եզրակացնել, որ եթե գեներալ Դենիկինը իր ծրագրերում հաջողություն ունենար, կարծում են, *Ադրբեջան* անունով պետություն քաղաքական քարտեզի վրա չէր հայտնվի, հետևաբար, դարաբաղյան հիմնահարց էլ «դատարկ տեղը չէր ծնվի» (Լեո, «Անցյալից»):

Արևմտյան մամուլը ևս լավատեսորեն չէր տրամադրված Ադրբեջանի անկախության նկատմամբ: Այսպես, ազդեցիկ «Թայմս» պարբերականը գրում է. «Ցանկացած ոք, ով պատկերացում ունի նախքան ռուսական հեղափոխությունը Վրաստանում և Ադրբեջանում տիրող վիճակի մասին, կհասկանա, որ նրանց անկախությունը լուրջ սպառնալիք է աշխարհում խաղաղությանը»:

Մտտ մեկ դար անց նույնիսկ համաճում պարբերականի հնչեցրած մտքերը շարունակում են երկրագնդի իսկական քաղաքակրթությունների համար լինել արդիական և հրատապ: Այո, աշխարհի խոշոր խաղաքարտերն իրենց ձեռքին պահող տերություններն այսօր էլ շարունակում են իրենց անպարտությանը ոչնչից պետություն ստեղծած Ադրբեջանի հետ խոսել փոխզիջման լեզվով, քանզի քաղաքական այսպիսի թնջուկում կողմնորոշող սեփական անփոփոխ շահերն են, և հենց այդ շահերին էլ մոտ մեկ դար առաջ զոհաբերվեց Արցախը:

**Լորեպա ԱՐԲԱՍՅԱՆ**  
**Սյրեհ. Վ. Զհանգիրյանի անվան հ. 11**  
**ավագ դպրոցի պարունության ուսուցչուհի**

ՇԱՐԻՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՆՈՒՌԻ ԸՆԹԱԿԱՆ ԸՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2014թ. օգոստոսի երկրորդ կեսին ՆՈՒՌԻ-ի թիմը ծրագրել է փոքրիկ տոնահանդես, որին մասնակցելու համար Ստեփանակերտի բոլոր դպրոցների 1-5-րդ դասարանցիները պետք է կատարեն համապատասխան աշխատանք: Սակայն եթե կատարվածը չհամապատասխանի հանձնարարության պահանջներին, աշակերտներն ինքնաբերաբար կզրկվեն մրցույթին մասնակցելու իրավունքից: Նախօրոք սահմանված ժամանակահատվածում (սույն թվականի մայիսի 5-16-ը) 1-4-րդ դասարանների աշակերտները պետք է հնարավորինս անթերի կատարեն իրենց բաժին ընկած հանձնարարությունը: Վերջում՝ մայիսի 19-23-ը, պետք է ընտրվեին հետաքրքիր և առավել բովանդակալից աշխատանքները, և պարզատրվել լավագույն միջոցառումը հեղինակած թիմը:



Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի աշակերտներին բաժին էր ընկել հազարամյակների պատմություն ունեցող, հեթանոսական ժամանակներից մեզ հասած եկեղեցական տոնը՝ Վարդավառը: Վարդավառը կամ Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տարավար տոներից մեկն է: Այս տոնը նշվում է Մուր Ձատիկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում: Հունիս Վարդավառի տոնը կապում էին Հայկական դիցարանի՝ ջրի, սիրո, պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ (հունական Աֆրոդիտե): Եռանդուն ուսուցիչներ Ձինաիդա Աբրահամյանի, Անահիտ Ներսիսյանի և Նարինե Թովմասյանի անմիջական նախաձեռնությամբ 5-րդ դասարանի աշակերտները

սիրով բեմադրեցին լեզենդը: Միջոցառման կազմակերպիչները ջանք ու եռանդ չէին խնայել հեթանոսական շրջանի կոլորիտ ստեղծելու համար: Ամեն ինչ ճաշակով էր ու ներդաշնակ՝ թե՛ դահլիճի գեղեցիկ կահավորումը և թե՛ մասնակիցների բեմական սիրուն հագուստը: Աչք էին շոյում հատկապես աղջիկների

նրբաճաշակ և տարբեր գույների զգեստները և մեկը մյուսից ճաշակով ձևավորված ծաղկեպսակները: Աղջիկների ուրախ և զվարթ երգն ու պարն ուղղակի հիացրին հանդիսատեսներին՝ պարզեցնելով նրանց բարձր տրամադրությունը:

Իր աննման գեղեցկությամբ և բացառիկ հրապուրանքով առանձնանում էր «Մազելի սիրո դիցուհին» պեմված կույսի ճերմակ շղարշով (4-րդ դասարանի Ավետյանն): Գեղասքանչ դիցուհին այնպես թեթև ու նազանքով էր քայլում բեմում, ասես իսկապես ծնվել էր լազուր ծովի ճերմակաթույր փրփուրներից, և քայլելիս ոտնահետքերում վարդեր էին բուսնում: «Իր փառքից շիկնած և ցուլուն աչքերը ներքև խոնարհած» աստվածուհին, խորհրդավոր

ժպիտը լուսաշող դեմքին, ջուր էր ցուրում բոլորի վրա, նրանք էլ իրենց հերթին ջերմ սիրով ու պատկառանքով մեկական կարմիր վարդ նվիրեցին սիրո դիցուհուն: Աստղիկը վարդի թերթիկներ էր թափում շուրջբոլորը, և այդ վարդաբույր թերթիկներն ասես աստվածային գեղեցկություն էին պարզում բոլոր նրանց, ում դեմքին քսվում էին վարդի թերթիկները:

Բեմում էր նաև սրբակենցաղ և արդար Նոյը, իսկ բոց մորուքով վիշապաբաղ Վահագնը՝ Աստղիկ դիցուհու սիրելին, ոչ մի քայլ չէր հեռանում իր սիրեցյալից՝ պատրաստ ամեն գնով պաշտպանելու ոչ միայն դիցուհուն, այլև բոլորին:

Հինգերորդիցները ստանձնել էին անչափ կարևոր, բայց միաժամանակ շատ հաճելի պատասխանատվություն, քանի որ նրանց բեմականացման վրա պետք է հենվի և ուղղություն ստանա փոքրերի բաժին աշխատանքը:

Եվ այսպես, մայիս ամսին մեր աշակերտները մեծ սիրով ու գործվանքով Վարդավառ տոնեցին: Վարդավառ տոնեցին, որպեսզի սիրաշահեն ու ոգևորեն ջրերի աստվածուհուն՝ Աստղիկին, որ երկինքն էլ անձրև ցողի մայր հողի վրա, և երաշմուղի այլևս երբեք չլինեն:

Ջուր ցողելու սովորությունը պահպանվել է նաև մեր օրերում, իսկ Նոյ նահապետն իր ներկայությամբ հիշեցնում էր բոլորին, որ երբևէ չմոռանան ջրհեղեղի պատմությունը և միշտ պարկեշտ ու ազնիվ կյանք վարեն:

Ռիմա ՄԵԼՈՒՄՅԱՆ  
Սրբեկ. հ. 6 հիմն. դպրոց

Շնորհավորանք

ԱՐԿԱՐ ՎԱՍՏԱԿ



Սարգուստյան կյանքն արժևորվում է վաստակով, մանավանդ երբ այն ուղղված է սերունդների կրթության և դաստիարակության գործին: Այդպիսին է Շուշիկի և Արկարյանի անվան հիմնական դպրոցի ուսնասվար Լիդա Մկրտչյանի կյանքի ուղին, որի ողջ գործունեությունը նվիրաբերում է ուսուցչական գործին և ընտանիքին:

Ծնվել է 1959թ. մայիսի 22-ին, ճարտար գյուղում: Դպրոցը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո 1979թ. ընդունվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ որոշելով իր հետագա ողջ գործունեությունը կապել մանկավարժական ոլորտի հետ: Ամուսնանում է և տեղափոխվում Երևան, ուր և աշխատում է հ. 84, 117, 187 դպրոցներում:

Արցախյան ազատագրական պայքարն ազդարար հանդիսացավ նրա ընտանիքի համար: 1990թ. ընտանիքով տեղափոխվեցին Արցախ: 1993-ից Լ. Մկրտչյանը, իսկ 1995-ից նաև ամուսինը՝ Մերուժան Սարգսյանը, իրենց ներդրումն ունեցան Շուշիկի կրթական գործունեությանը: Նախ աշխատեց ևս. Արկարյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ապա՝ Մուրացյանի անվան միջնակարգում: 2001թ. նշանակվեց ուսնասվար, իսկ 2011-ից՝ ևս. Արկարյանի անվան հիմնական դպրոցի փոխտնօրեն:

Լ. Մկրտչյանը եռանդուն անձնավորություն է, աշխատասեր, լի պատասխանատվության մեծ զգացումով: Իր բուն մանկավարժական գործունեության համար նա բազմիցս արժանացել է պատվոգրերի: Կոլեկտիվը բարձր է գնահատում նրա աշխատասիրությունը ու նվիրվածությունը, որի համար էլ սրտանց շնորհավորում է ծննդյան 55-ամյակը:

Լ. Մկրտչյանը ոչ միայն աշխատանքում է դրսևորում պատասխանատվության մեծ զգացում, այլ նաև ընտանիքում: Ուշադիր կին է և հոգատար մայր: Ունեն երեք որդի, որոնցից երկուսը ստացել են մանկավարժական կրթություն: Նրանց ներդաշնակ ընտանիքը շատ բան է ասում հասարակությանը:

Հոբելյանական 55-ամյակի առթիվ Լ. Մկրտչյանին ցանկանում ենք մեծ ակյուն, առողջություն, նորանոր ձեռքբերումներ աշխատանքում և անձնական կյանքում:

Շուշիկի և Արկարյանի անվան հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԸՆԹԵՐՅԵԼԸ ՏԱՐԻՔ ԶԻ ՀԱՐՅՆՈՒՄ

Հաճախ մեզ՝ մանկավարժներին, թվում է, թե ներկա սերունդն ընթերցել չի սիրում: Ե՛րբ է, փոխվել են ժամանակները, աշակերտն իր ազատ ժամանակն անց է կացնում համակարգչի առջև՝ ընկնելով այլ ձգող ու գրավիչ աշխարհ: Բայց եթե կարողանում են նրա մեջ սեր առաջացնել դեպի գեղարվեստական (և ընդհանրապես) գիրքը, հավատացե՛ք, որ նա կցանկանա ձեռքը վերցնել այն ու ընթերցել:

Այս ուսումնական տարվա վերջին ինձ զարմացրել ու միաժամանակ հիացրել է հինգերորդի իմ աշակերտուհիներից մեկը: Մայրենիի վերջին դասն էր, Վերջին զանգի օրը: Աշակերտները մեծ դժվարությամբ ու ցավով են բաժանվում մայրենիի՝ իրենց համար արդեն հոգեհարազատ դարձած դասագրքերից: Հանձնարարեցի, թեկուզ բանավոր, հանդես գալ իրենց մտքերով, իրենց կարծիքներն արտահայտել դասագրքի մասին, երախտագիտության, գոհունակության խոսք ասել դասագրքի հեղինակների մասին: Պարզվեց, որ աշակերտները շատ են սիրել դասագիրքը և ավելին են ցանկանում տեսնել նրա էջերում:

Մի առիթով, երբ հայրենասիրական թեմայով դաս էի անցնում այդ դասարանում, բավականին առաջ անցնելով ժամանակի և ժամրային առանձնահատկության մեջ, նրանց պատմեցի հայ գրականության հայրենասեր ու քաջարի հերոսի՝ Սամվելի մասին: Ձեռքիս տակ ունեի վեպը և ցույց տվեցի նրանց:

Ձարմանքս անչափ մեծ էր, երբ վերջին դասին այդ աղջնակը ստիպեց ինձ իրեն տալ Բաժնու «Սամվել»-ը և պատրաստակամությամբ հայտնեց ընթերցել վեպը: Մնացել էի շվարած. ի՞նչ անեմ, տա՞մ նրան գիրքը: Փորձում էի հանձնել, որ դեռ վաղ է, որ իր մանկա-

կան ուղեղը դեռ պատրաստ չէ նման ծավալուն ստեղծագործություն կարդալուն: Նույնիսկ առաջարկեցի հեքիաթների ժողովածու կամ մանկական բանաստեղծությունների գիրք, սակայն ջանքերս իզուր էին. նա հավատացրեց ինձ, որ, իրոք, ինքը պատրաստ է դրան: Երբ նրան հորդորում էի (նրա աչքերում նույնիսկ երևացին արցունքներ), թախանձագին ասաց. «Ընկեր Սահակյան, Դուք տեղի ասացե՛ք, ես կվերցնեմ»: Նրան թվացել է, թե գիրքը տանն է, իսկ երբ իմացավ, որ հայոց լեզվի կաթինետում է, իսկույն թռավ տեղից ու վայրկյաններ անց, «Սամվել»-ը կրծքին սեղմած, մտավ դասարան: Ընկերուհիները թափվեցին նրա զլխին, թերթում էին էջերը, հետո հերթագրվեցին, որպեսզի հերթով արձակուրդների ժամանակ ընթերցեն «Սամվել»-ը:

Երբ ես վերջին գրառումներն էի անում մատյանում, հանձնարարություններ տալիս նրանց, Ալիսան կամաված ընթերցում էր վեպի առաջին էջերը, մինչև դասի վերջը նա ավարտեց առաջին ենթավերնագիրը: Ինչպիսի՞ հիացումն էր համակում ինձ, երբ նա հարցեր էր ուղղում ինձ, երբ իմացավ, թե ինչ լուր էին տանում այն երկու սուրհանդակները: Խոսքը այն չարագույժ բոթի մասին էր, որ տակնուվրա արեց Սամվելի հոգին, իսկ մորը ուրախություն պարզեց:

Ուրախ եմ, որ «Սամվել»-ը հիմա գտնվում է ընթերցողի ձեռքերում, որ թերթելու է նրա էջերը, հիանալու է մեծ ռոմանտիկ խոսքի և ոճի վարպետությամբ ու գունագեղ նկարագրություններով: Հանդիպելու է նոր բառերի ու անունների: Ի դեպ, հանձնարարել եմ նաև կատարել բառային աշխատանք՝ դժվարիմաստ բառերի բացատրությունը գտնել բառարաններում: Լավ է, որ աշակերտներին մեջ սեր կա դեպի ընթերցանությունը, որ կարողացա նրանց ուշադրությունը սևեռել դեպի

գիրքը, որի մեջ էլ նրանք գտան զարմանահարաշ ու հետաքրքիր մի աշխարհ:

Օրեր հետո այցելեցի բարեկամիս՝ սիրելի ուսուցչիս: Այցս պատահական էր, չնախատեսված: Դարձյալ հիացա, երբ ընկեր ևս. Դասարանին գտա իր սենյակում, գրասեղանի առջև նստած, ընթերցելիս: Որքա՞ն մեծ էր զարմանք, երբ նրա գրասեղանին թափված տեսա ժամանակակից հայ գրողների, արցախցի բանաստեղծների ու գրականագետների՝ Ս. Խանյանի, Ռ. Եսայանի, Վ. Հակոբյանի «Անդրադարձի տեսիլներ», Նվարդ Սողոմոնյանի «Կոլոց», Հայկ Խաչատրյանի, Գ. Գաբրիելյանի գրքերը: Իսկույն իմ մտքում առկայծեց այն միտքը, որ ընթերցելը տարիք չի հարցնում:

Վաստակաշատ մանկավարժը նոր էր ավարտել Գր. Գրիգորյանի «Երկար ճանապարհից հետո» գրքի վերջին հատորի ընթերցումը, և ընթացքի մեջ էր Մ. Օհանջանյանի «Արցախի հայրենի եզերք» գիրքը: Արդեն ընթերցած գրքերի ցանկում ես գտա ինձ համար անձանոթ հեղինակի՝ Վ. Կրիվոպուսկովի «Мятежники Карабах» գիրքը, ինչպես նաև իր հայրենի եզերքի բնակավայրերի պատմության մասին գրքեր՝ Սվետլանա Ղուլյանի «Բանաձոր», Գեղամ Աբայանի «Տող բերդաքաղաքի պատմությունը», Արտավազ Բաղդասարյանի «Հայրենի եզերք», Ազիս գյուղի անցյալի ու ներկայի մասին գիրքը, Երվանդ Աբրահամյանի «Մեծ Թաղեր» պատմականարկային ստեղծագործությունը: Տաղանդավոր մանկավարժը հաճախակի է հանդես գալիս գյուղում անցկացվող միջոցառումներին, որոնց ժամանակ նա իր հարուստ բառապաշարով գրավում է բոլորի ուշադրությունը, ինչի աղբյուրն էլ հանդիսանում են գիտելիքների շտեմարանները, որոնք շարված են նրա գրասեղանին: Պատկառելի տարիքում գտն-

վող մանկավարժը չի հագնում գրքերից, շարունակում է սովորել նոր բաներ և գիտե՞ք ինչ է ասում՝ շատ խելոք են մեր նորօրյա գրողները, և ինձ էլ խորհուրդ է տալիս ընթերցել նրանց: Ես խոստացա նրան, որ իմ բազմազբաղ առօրյայից կկտրեմ այն թանկագին ժամանակն ու կնվիրեմ ընթերցելուն: Այսօր այնքան ծանրաբեռնված է ուսուցչի աշխատանքը, այնպիսի նոր պահանջներ ու խնդիրներ են ծառայում ուսուցիչներիս առջև, որ ընթերցելու թե՛ ժամանակը և թե՛ հնարավորությունները հասնում են փոքրագույնի, բավարարվում ենք դպրոցական տարիքում ընթերցածով, բայց այնքա՞ն են ուզում կրկին ընթերցել, թարմացնել իմ իմացածը: Վերլուծականները սահմանափակ գիտելիքներ են տալիս, բնագիրն ընթերցելն է կարևոր:

Դե ինչ, եթե լինում է ցանկությունը, կողքից էլ օգնում է տրամադրվածությունը, և աշխատանքն էլ տալիս է իր արդյունքները: Սկսվել են արձակուրդները: Եկե՛ք հորդորենք, պահանջենք, որ ամառային եռուզեռի ընթացքում ազատ ժամերին մեր երեխաները մի պահ կտրվեն խաղից կամ համակարգչից և զբաղվեն ընթերցանությամբ: Թող ընթերցեն ինչ ուզում են՝ լինի գեղարվեստական, թե ակնարկային, մանկական պատկերազարդ, թե գիտահանրամատչելի, միայն թե ընթերցեն, քանզի ընթերցանությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում ստեղծագործական կարողությունները: Փառք Աստծո, այսօր մեր գրադարանները և տպագիր մամուլը տալիս են այդ հնարավորությունները, մնում է, որ չալարեն, օգտվեն մեր երեխաները:

Քննուշ ՍԱՀՎԱՅԱՆ  
Տոմու միջն դպրոցի  
հ. լեզվի և գրականության  
ուսուցչուհի



ԳՐԱՂՐԱԿ

ՍՈՎՈՐԵԼՈՎ՝ ԱՅՆ ԿԱՐԵԼԻ Ե ԶԱՄԱՐԵԼ ՍԵՂԱՆԻ ԳԻՐՔ

Վերջերս Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» հրատարակչությունը բավական մեծ տպագրանակով (1000 օրինակ) վերատպել է ուսումնամեթոդական մի ձեռնարկ, որը կրում է «Հայոց լեզու» ընդհանուր խորագիրը: Կազմողները մեր կողքին ապրող, գրեթե ամեն օր մեզ հանդիպող մարդիկ են՝ Արմեն Սարգսյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ռոմելա Դադայան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ԼԴՂ վաստակավոր մանկավարժ, Շողեր Մինասյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ալինա Բաղդասարյան, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Գիրքն ամբողջովին ողողված է խնամքով մշակված ու տեղին օգտագործված առաջադրանքներով, որոնց պատասխանները պահանջում են մտքի սեռում ու կարողությունների լարում: Ու գրեթե բոլոր վարժությունները, առաջադրանքները ստիպում են ուսուցչին, ընթերցողին՝ խորհել, մտածել, իմացածը վերհիշել, ստուգել, քերականական այս կամ այն կանոնը վերստին կրկնել, աչքի անցկացնել, տարբեր աղբյուրների դիմել: Անկեղծ լինե՞ք ու ճիշտը ասե՞ք: Ես, օրինակ, դժվարացել ու քիչ ժամանակ չեմ կորցրել մի շարք առաջադրանքների սպառնիչ պատասխաններ տալու համար: Բացքը, խնդրեմ, 284, 285 էջերը, կարդացե՛ք նրանցում գետեղված հարցերը, փորձե՛ք անմիջապես լրացնել ու առաջ անցնել և

կհանդգնե՛ք, որ դա ամենակից էլ դյուրին բան չէ: Ահա սովորական թվացող այդ հարցերից մի քանիսը. *Ուրիշի ճրագ, Հայկական Գող, Հայկական Բուլոլ, Հայկական Մոլիեր, Կենդանի տանկ, Ալպիական համրապետություն* և այլն:

Նմանատիպ դժվար հարցերի կարելի է հանդիպել ձեռնարկի շատ ու շատ էջերում: Ու չկարծե՛ք, թե դա արվել է գարնացնելու, ուսուցչին խնդրի առաջ կանգնեցնելու, «խեղճացնելու» համար: Կազմողները՝ որպես կանոն, խուսափել են ավելորդ բարդություններից, առաջադրանքներն խրթին դարձնելուց, ընթերցողին վհատեցնելուց, իր ուժերի հանդեպ ունեցած հավատի «գունատումից»՝ դրանով իսկ բոլորից բարձր, բոլորից գիտուն, ուսյալ երևալու համար: Այսպիսի միտում ես չեմ տեսնում: Նրանք ամեն ինչ արել են՝ էլնելով ուսումնական ծրագրով նախատեսված պահանջներից, այսօրվա դպրոցի առջև ծառայած խնդիրներից: Իսկ այդ խնդիրները, պահանջները, ինչպես գիտե՞ք, մոյսը չեն մնում:

Տարեցտարի փոխվում, ավելի են բարդանում, մեծանում: Ասել կուզի, մենք՝ ուսուցիչներս, պիտի ձգտենք քայլել ժամանակին համընթաց: Ի դեպ, «Երկու խոսքում» կան այսպիսի տողեր.

«Հայոց լեզվի առաջադրանքները կազմվել են ամփոփելու և ամրապնդելու բոլոր այն տեսական ու գործնական գիտելիքները, որ աշակերտը ստացել է իր ուսումնառության տարիներին: Դրա համար էլ առաջադրանքները, ինչպես իրենց թեմատիկ հաջորդականությամբ, այնպես էլ նյութի ընդգրկման խորությամբ համապատասխանում են դպրոցական ծրագրերին»:

Նշենք, որ ձեռնարկը կազմված է հինգ բաժիններից (Հնչյունաբանություն, Բառարևոյություն, Շարահյուսություն, Ոճաբանություն), որոնցից յուրաքանչյուրն իր հարուստ բովանդակությամբ և բերված օրինակների բազմազանությամբ կարող է առանձին գրքույկի դեր ու նշանակություն ունենալ: Ամենամեծ բաժինը Շարահյուսությունն է՝ 114 էջ: Արդարև, հարուստ նյութ է պարունակում ձեռնարկը. բառերի այբբենական դասավորությունից մինչև

անկանոն ու պակասավոր բայերի խոնարհում: Դեռ վերջում էլ յուրօրինակ հավելված ունի, ուր ընթերցողը կարող է գտնել իրեն հետաքրքրող հարյուրավոր բառերի բացատրությունը: Հաճելի, ողջունելի երևույթ: Կարծում եմ՝ եթե ուսուցիչը հիմնովին տիրապետի նշած ծավալուն նյութին, կարող է հանգիստ խղճով ու բաց ճակատով դասարան մտնել և լեզու-գրականություն ավանդել հանրակրթական դպրոցում, մի բան, որը կրթության ոլորտի պատասխանատուների ու շարքայինների առաջնահերթ խնդիրներից մեկն է, եթե չասենք՝ ամենակարևորը, ամենազխավորը:

Գրքի ընթերցումը մեզ բերում է այն համոզման, որ, լինելով դպրոցական ուսումնական առարկաներից մեկը, մայրենի լեզուն հանդես է գալիս որպես ուսումնական բոլոր առարկաների ուսուցման հիմք: Մայրենիի այս բացառիկ մեծ դերով ու նշանակությամբ պիտի բացատրել այն ուշադրությունն ու հոգատարությունը, որ ցուցաբերում են ԿԳ նախարարությունն ու հանրապետության նախարարությունը հայոց լեզվի ուսուցման դրվածքը, մասնավորապես նրա գործնականացումը բարելավելու ուղղությամբ:

Բարձր դասարանցիների, դիմորդների, ուսանողների ու, մասնավորապես՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար նախատեսված ուսումնամեթոդական այս ձեռնարկն անչափ օգտակար,

կարևոր ու արժեքավոր է: Նրան պիտի առնչվել հաճախակի, պիտի կարդալ, երբ անհրաժեշտ է, այն էլ՝ շատ ուշադիր, մտորելով, ինքը քեզ ստուգելով, ինքը քեզ հաշիվ տալով, սովորելով: Ես այդպես եմ կարծում: Ավելին. հեղինակային կոլեկտիվի հասցեյին երախտագիտության ու գոհունակության բառեր պետք է ասել՝ մեծ ու շնորհակալ այս գործի համար:


Վերջում՝ մի փոքր դիտողություն: «Համր բնագրեր» վերնագրի տակ տեղ են գտել տարբեր հեղինակների (Վարդգես Պետրոսյան, Ստեփան Չոլոյան, Սերո Խանգաղյան, ուրիշներ) արձակ ստեղծագործություններից վերցված առանձին հատվածներ՝ կետադրելու համար: Ու զարմանալիորեն՝ ո՛չ մի կտոր թունամյանից, Շիրվանզադեից, Նար-Դոսից...

Սրանց փոխարեն իր ամբողջ հասակով եկել-կանգնել է (այն էլ՝ երկու անգամ ու նույն ստեղծագործությամբ) Զարգանդ Դարյանը:

Բնական է, ոչ ոք ոչինչ ասել, ևս առավել՝ առարկել չի կարող: Բայց Մեծն Լուսեցուն թողնել ու Զ. Դարյանի ոչ այնքան սրտամոտ ու գրավիչ տողերը հիշել, պարզապես խոհեմ քայլ չեն համարում:

Ներթույնները թողնում են հեղինակներին:


**Սիբայել ԲԱՆԱՆ**  
**20-րդ դարի Արցախի կավագույն մանկավարժ**



Յուրաքանչյուր մարդու համար թանկ ու անմոռանալի են այն հիշողությունները, որոնք կապված են մանկության և հայրենի գյուղի հետ, սակայն ոչ բոլորին է հաջողվում ի մի բերել այդ ամենը, ամփոփել և ստեղծել մի հրաշալի գիրք՝ անմահացնելով համազրույցի ներքին՝ համեմատված հուճկոյով և գրելու յուրահատուկ ոճով: Համաձայնե՛ք, որ լավ հուճկոյով գրել, ծիծաղեցնել մարդուն և միաժամանակ պահպանել դեպքերի ու դեմքերի իրական լինելը՝ մեծ վարպետություն է պահանջում:

րել ծաղրից ու գրոտեսկից, և այս բոլոր պատուությունները կընդունեն մեղմ ժպիտով, բարի վերաբերմունքով, և որ ամենակարևորն է, շնորհակալության գիտակցումով:

Այս գիրքը յուրաքանչյուր խնայատուր համար պիտի դառնա սեղանի գիրք, քանզի այստեղ մեր գյուղի կենսագրության մի մասն է,



իսկ հերոսները՝ իրական, պարզ ու հասարակ մարդիկ, որոնք այնքան մաքուր ու անկեղծ են խոսում, որ ակամայից շատ կարևոր մարդիկ են դառնում, և չնայած նրանցից շատերը, ցավոք, վաղուց չկան, բայց այս գրքի շնորհիվ վեր հաննեցին ու մեզ համար մեր բացահայտումներ դարձան՝ սիրելի և միշտ հիշվող...

Թե՛ խաղողի այգուն պահակ Աղալարը, թե՛ կոլխոզի նախագահ Ավետիսյան Սային, թե՛ Դադաշ ամին, օղակավոր Բեշկունց Կուրին, թե՛ խոջա Մուքին և իր հարևան Կափին, դարբնությամբ զբաղվող Ըղբանց Մուխտարը, Դահիրունց Սոնան, Բաբունց Մոսեսը, որը գյուղում բարի համբավ ուներ, Սիյանանց Կեվերը, որը վարպետորեն հարսանիքի գիշերը աներոջ տնից ոչխարներ է գողանում և բերում տուն, իսկ առավոտյան հայրական տան ոչխարների հոտը ճանաչած հարսին լռեցնում է՝ «Ծեղըտ կըտրե, աշկետ ա ըրվամ, և ձու սիրող Հրեթանց Սիբայելը, որը երագուն էր, որ ձուն ան էր սիրելի գոմեշ Սարխոշը, առանց հետևանքների մասին մտածելու, թե վառ երևակայությամբ օժտված սուտասաններ Մո-

սունց Սահակն ու Սկինդարունց Հարաբեղը, որոնց զարմացնում է այն փաստը, որ գյուղ եկած լեկտորը սրախսությամբ իրենց թխեց անցավ, թե՛ միամիտ 14-ամյա Դըլլաբանց Մարուշան, որ իր տարեկից թոփունց Աննայի հարսանիքի օրը բարձր կանչում է.

«Հե՛ Աննա, հե՛ Աննա, ներակ քեզ, քո հըր-սանեթդ ա», թե՛ Մարգուշա Մելքունյանը, որն այնքան փոքր տարիքում էր ամուսնացել, հետ տուն էր եկել, հարազատները տուն վերադարձած աղջկան այսպես էին համոզում.

«Իմ բալաս խելունքա, էս ա հաց ա օտում, չայ խմե, ու քյինա», թե՛ բարի ու կատակասեր Գուփանը, որն իր մականունից երբեք չէր վիրավորվում, թե՛ պարզամիտ գլուխ գովող Արմենակ Բաբաջանյանը, որ ձեռքը դեպի ուրջ տանելով, ասում է՝ Մարտունա դյանը լոխ ստղղավ ա անց կենում, թե՛ թիթեղագործ Սալին, որը ևս հուճկոյով ու կատակի վարպետ էր, թե՛ Բաղայան Սիբայելը, որ կնոջ հայտնած լուրից, թե՛ գողերը տանիքի եղած-չեղածը տանում են, հանգիստ ասում է՝ «Տար մարդ-ուվանը տիր, թող քշանան քյինան... թե՛ եր-



թեմն փիլիսոփա դառնող մարդիկ, ինչպես Քարամյան Համոն, որ միշտ ասում էր.

«Մարթ պիտի էնքան խմե, վեր մըռնելանը ետը գերեզմանան օխտը տարե քցելավետ կյա», թե՛ Պրունանց Վալերիկը, որը հանկարծ հայտնաբերում է, որ ատում է մաթեմատիկական և իրենց բակում ընկած մի գերանի վրա գրում է. «Այստեղ թաղված են աշխարհի բոլոր մաթեմատիկոսները»:

Բնականաբար, հնարավոր չէ թվարկել բոլորին, բայց կարծում եմ, արդեն զարգափար կազմեցիք, թե ինչքան հետաքրքիր ու զվարճալի պատմություններ կան՝ գետեղված այս փոքրիկ գրքում, և շարժեցի ձեր հետաքրքրասիրությունը՝ ժամ առաջ ունենալ այն և ընթերցել, եթե մույնիսկ նախապատից չեք:

Եվ ինձ իրավունք են վերապահում բոլոր խնայատուրների ամուսնից շնորհակալություն հայտնել մեծարգո պարոն Խաչատրյանին, այս ոչ գյուղին աշխատանքը կատարելու համար:

Համոզված եղեք, որ Ձեր կատարած գործը կզնահատվի այսօր և ապագայում: Իսկ ես էլ իմ կողմից իմ սրտի խոսքը կասեմ սիրելի խնայատուր մասին:

Սիրում եմ գյուղը ես իմ հայրենի, Արյել եմ այնտեղ մարդիկ անվանի, Որոնց իրավամբ կոչել են լողվա, Եվ ճիշտ են արել, հենց այդպես էլ կա, Դա նորություն չէ ոչ ոքի համար, Սիրում եմ լինել միշտ վեհ կեցվածքով, Ու բոլորի մոտ միշտ փայլել խելքով, Զփստենք, նաև՝ գլուխ գովալով, Սիրում եմ գյուղը ես իմ հայրենի, Սիրում եմ ձայնը հորս դուռուկի, Սիրում եմ պարը Շալախոյի ու Քոչարու, Սիրում եմ գյուղիս առավոտները, Երբ լսվում են արոտ տանող կովերի զիլ ձայները,

Իրենց մորը փնտրող գառան մայունները, Սիրում եմ գյուղիս ամեն մի անկյունը, Մեր Կիրատեղը, Կետն ու Չխարը, Մեր կրթօջախը՝ մեր երկրորդ տունը, Ու բարի մարդկանց անկեղծ ջերմությունը,

Եվ սուրբ Մեծ նանի գերգորությունը, Սիրում եմ ես, սիրեք և դուք, Լինեք այստեղ թե՛ այլուր, Հայրենի գյուղը սրբություն է, Իսկ մոռանալ այն, հաշվեք ստորություն: Ես հպարտ եմ իմ խնայատուր, Նույնն էլ Ձեզ եմ խնդրում ես մեծ հավատով:

**Անահիպ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**  
**ԱրՊՂՂՂ Նախկին ասպիրանտ**

<p><b>ԼՈՒՍԱՐԱՐ</b> <b>ԽՄԲԱԳԻՐ</b> <b>Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ</b></p>	<p>Հիմնադիր՝ <b>«Լուսարար» ՓԲԸ</b></p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: <a href="http://www.lusarar.info">www.lusarar.info</a></p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3180: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 06.06.2014թ.:</p>
---	--	--	--	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: